281.6(09)
Ա. Զերեմյան գրքեր

Հրատարակութիւն Սրբ. Օրմանեանին համակրող
Նոր-Նախիջեւանցիների

281(3)
Ղ-87

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ

Ե Ի

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

560

Գրեց ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴ. ՑՈՎՍԷՓԵԱՆ

Բ. տպագրութիւն

Ա 67443

ԱՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐՍԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ ՍՍՀ

ԹԻՖԼԻՍ
ՏՅՈՒՐԱՆ ՎԻՐԱՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿ.
1911

ՍՍՌՄ ԳԻՏ Է
1952 թ.

1716

2824

ՅԱՌԱՋԱԲԱՆ Ա. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Երկու հանգամանք մղել են մեզ հայ հասարակութեան առաջ դնել այս գրքոյկը։ Առաջին՝ մեր խորին համոզումն է, որ Ս. Էջմիածնի ներկայ քայքայուած պայմաններին համար ս. Օրմանեանը, որպէս կարող, կրթուած եւ վարչագէտ անձնաւորութիւն, արժանաւորագոյն ընտրելին է կաթուղիկոսական աթոռի համար։ Այս համառօտ կենսագրականով փորձում ենք ծանօթացնել հայ հասարակութեան նորա բեղմնաւոր գործունէութեան հետ և պարզել այն թիւրիմացութիւնները, որ տարածել են նորա հակառակորդներն ու թշնամիները հասարակութեան մէջ.

Երկրորդ՝ մեզ այս գործին մղել է մեր խիղճը, որ անհրաժեշտ է զգացել արդարութեան ձայնը բարձրացնել այն գռեհիկ և բարբարոսական վարմունքի դէմ, որ Կ. Պոլսոյ խուժանը իւր պետերով, և տարկութեան չղթաների մէջ սնուած անբարոյական լրագրութիւնը ցոյց տուին հրաժարուած պատրիարքի դէմ, յաւիտենականն նշաւակութեան արձան կանգնելով իրենց համար։ Մերկապարանոց ստութիւնն ու անպատկառ զրպարտութիւնը այդ մարդկանց լաւագոյն զէնքն էր սեպնելու և ըստ ամենայնի վարկաբեկ անելու մի բարձրաստիճան հոգևորական, որ ծանր օրերի մէջ ցոյց տուած իւր խելօք գործունէութեան համար, այս ազատութեան օրերին արժանի էր երախտագիտութեան և շնորհակալութեան։

Այս գրքոյկը գիտական բնաւորութիւն չունի, գրուած է հասարակութեան աւելի լայն խաւերի համար. այդ պատճառով էր խուսափել ենք աղբիւրների ցուցումներով և ծանօթութիւններով դժուարացնել ընթերցանութիւնը։

Գարեգին վարդ. Յովսէփեան

4 հոկտ. 1908 թ.,
Ս. Էջմիածին։

նոր վիճակաբանութիւն, պահում ենք նոյնութեամբ։ Հակառակորդների անցեալ տխուր շահատակութիւնները թող ապացոյց լինեն որակելու և նրանց նոր արշաւանքները, որոնց միակ նպատակն է հասարակութեան մոլորութեան մէջ պահել։ Սբբագրութիւններն ու յաւելումները կատարել ենք ոչ մեծ ծաւալով, գրքոյկը շատ չտուաարացնելու և ընթերցանութիւնը դիւրամատչելի պահելու համար։

Դարեգին վարդ. Յովսէփեան

4 օգոստ. 1911 թ.
Թիֆլիս։

ՄԱՂԱԲԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ա.

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան՝ Կ. Պոլսոյ հրաժարուած պատրիարքը ծնել է 1841 թուին վերջը. 11-ին Կ. Պոլսի Բերա թաղում։ Նորա ծնողները կաթոլիկ էին։ Նախնական կրթութիւնը տանը և տեղական դպրոցներում ստանալուց յետոյ՝ ուղարկուած է տասնամեայ հասակում 1851 թ. Հռոմ՝ Անտոնեանց վանքում շարունակելու իւր ուսումը։ Ուշիմ պատանին այստեղ մեծ յաջողութեամբ 1858 թուին աւարտեց իւր միջնակարգ ուսումը, սովորելով հայերէնի հետ իտալերէն, լատիներէն և դաղղիերէն լեզուները։ Ապա արեղայական օրհնութիւն ստանալով (առանց քահանայական ձեռնադրութեան)՝ մտաւ Ս. Ապոդինարի սեմինարը կամ բարձրագոյն դպրոցը, ուր 1860 թուին փիլիսոփայութեան դոքտորի քննութիւն տուաւ։ Այնուհետև մինչև 1865 թիւը (յունիսի 8-ը (Ն. տուամար) նա աստուածաբանութիւն ուսաւ և աստուածաբանութեան դոքտորի աստիճան ստացաւ atto pubblico կոչուած հրապարակային և մեծահանդէս վիճաբանական քննութեամբ։ Ընդունակ արեղան այս երիտասարդական հասակում արդէն հմուտ աստուածաբանի հռչակ էր ստացել և 1863 թուին մըրցանակներ։ Նոյն թուին Հ. Եդուարդ Արքեպիսկոպոս Հիւրմիւզեանի ձեռքով նախ սարկաւագ և ապա օգոստոսի 12-ին քահանայ ձեռնադրուեցաւ իբրև Անտոնեանց միաբանութեան անդամ։ Բայց իբրև արեղայ ևս նա շարունակեց իւր դիտական աշխատանքները և 1868 թ. օրէնդիտութեան դոքտորի աստիճան ստացաւ։ Այս հակիրճ տեղեկութիւնները ցոյց են տա-

լիս, թէ ինչպիսի բաղմակողմանի և գիտնական պատրաստութիւն և զարգացում ունի Ս. Օրմանեանը. նա ոչ միայն հիմնաւորապէս ծանօթ է մեր հին և նոր գրականութեան պատմութեան, այլ և ինչպէս մայրենի լեզուով կարող է խօսել ֆրանսերէն, իտալերէն, քաջ գիտէ լատիներէն, խօսում է տաճկերէն, տեղեակ է մասամբ և գերմաներէն լեզուին։

Բ.

Այսպիսի լուրջ պատրաստութեամբ 1866 թուից արդէն նա մտնում է հասարակական գործունէութեան մէջ։ Նորա առաջին, հասարակական գործունէութիւնը կապուած է ազգային մի կարևոր խնդրի հետ. թէև հայ կաթոլիկ համայնքի մէջ ամփոփուած։ 1866—1870 թ.թ. սկսում է Հասունեան և Հակահասունեան վէճը, որ այնքան նշանաւոր հանդիսացաւ կաթոլիկ Հայոց պատմութեան մէջ։ Այս վէճը թէև սկզբում մասնաւոր բնաւորութիւն ունէր և Հասունի անձնական, իշխանասիրական հակումները մեծ դեր էին խաղում, բայց շուտով նա ազգային մի խնդիր է դառնում։ Հասունը յենուած էր հռոմի վրայ. նա ոչ միայն պաշտպանում էր անսխալականութեան դաղափարը, այլ և գոհում հայ կաթոլիկ եկեղեցւոյ ազգայնութեան և անկախութեան մնացորդները։ Կաթոլիկ պրոպագանդան, որ կարողացել էր եպիսկոպոսութիւն ձգել արևմտեան Հայոց մէջ և սպառել ժԷ. ժԸ. և ժԹ. դարերում մեր ժողովրդի և եկեղեցւոյ լաւագոյն ոյժերը, այժմ յանձին Հասունի և նորա կողմնակիցների կամենում էր կլանել հայ կաթոլիկ եկեղեցին, ոչնչացնելով նորին անկախութեան և ազգայնութեան տարրերը։ Հասունի անձնական ոտնձգութիւնների դէմ էին և ազգայնութեան պաշտպան Հակահասունեանները։

Ահա այս խնդրի մէջ է հանդէս գալիս Օրմանեանը առաջին անգամ իբրև հասարակական գործիչ. նա հակահասունեան, այսինքն՝ ազգային ուղղութեան գլխաւոր ներկայացուցիչներից մէկն էր և կարելի է ասել ոդին։ Մաղաքիա վարդապետ Օրմանեան իբրև խորհրդական ատատուածաբան և քարտուղար՝ Անտոնեան միաբանութեան կողմից ներկայ էր 1869 թ. յուլիսի

5-ին այս վէճի առթիւ դումարուած եկեղեցական ժողովին. նա հանդուն կերպով մասնակից էր նոյնպէս այդ մասին կազմուած յանձնաժողովների գործունէութեան։ Անտոնեանք, որ միխիթարեանների հետ, ազգային ուղղութեան պաշտպաններն էին Հասունեան վէճերի ժամանակ, Հռոմից նեղուելով՝ ստիպուեցան Պօլիս վերադարձել 1870 թ., թողնելով իրենց վանքը, դպրոցն ու կալուածները։ Միխիթարեանք միայն անհատաբար էին մասնակցում այս խնդրին. նոքա էլ յետ կացան, երբ Վատիկանի պաշտպանութեամբ Հասունը յաղթող հանդիսացաւ։ Մի տարի յետոյ Անտոնեանք Մաղաքիա վարդապետ Օրմանեանին Հռոմ ուղարկեցին իրանց կալուածական իրաւունքն ու վանքը պահպանելու, ուր մնաց մինչև 1876 թ.։

Այս ժամանակ նա հրատարակեց այս վէճի հետ կապ ունեցող իւր հետեւեալ աշխատութիւնները ա) Gli Armeni cattolici orientali Constantinopoli 1870. 8⁰ եր. 117. բ) H. Reversurus, ovvero la Tarchia ed il papato, Rome, 1872. 8⁰. եր. 35 գ) Les droits civils et la liberté religiëuse des Catholiques d'Orient 1872 Rome դ) Le Vatican et les Arméniens 1873 Rome Այս աշխատութիւնների մէջ հեղինակը Հասունեանց դէմ առարկելով՝ պաշտպանում է արեւելեան կաթոլիկ եկեղեցիների անկախութեան գաղափարը ընդդէմ պապի բեվերսուս կոնդակի։ Մաղաքիա վարդապետը ամենից աւելի զօրաւոր կերպով արծարծում և քննութեան նիւթ է դարձնում այս խնդիրը իւր վերջին աշխատութեան մէջ։ Պ. Արշակ Զօպանեանը այդ գրուածքը բնորոշում է որպէս «լայն և ամուր հմտութեամբ, յստակ ու ջղուտ տրամաբանութեամբ և յանդուգն ու պայքարող ոճով գործ, որ բանակուռական ոլորտին կը բարձրանայ. պատմական լուրջ աշխատութեան մը պատկառելի դոյնն ունի։ Ահա մի փոքրիկ հատուած, որ շատ բնորոշ է հեղինակի հայեցողքների և ուղղութեան վերաբերութեամբ. «իր (արեւելեան եկեղեցին) պատրիարքներն ու եպիսկոպոսները՝ իրենց առաքելական իրաւունքներովը զօրաւոր, իր բովանդակ կղերը, աշխարհականներու հոգեւոր մասնակցութեամբը հպարտ, իր հաւատացեալները՝ իրենց կրօնական անկեղծութեան մէջ փառաւոր, ոչ անասրբեր, ոչ մոլեռանդ. ասոնք են տիրոջս-

ներբ որ թոյլ կուտան Արեւելքի եկեղեցւոյն ինքզինքը Արեւմուտքի եկեղեցին ստորադաս չընկատել»)։ Ընդդեմ-ուած տողերը մանաւանդ յայտարար են նորա ազգային ուղղութեան նոյնիսկ կաթոլիկ եղած ժամանակը։ Մաղաքիա վարդապետ 1876 թ. Հռոմից Պօլիս դառնալով՝ դարձեալ եռանդուն կերպով շարունակում է իւր պայքարը Հակահաւատներանց դէմ՝ այժմ արդէն իրրև Անտոնեանց միաբանութեան տնօրէն ժողովոյ անդամ կամ «խնամատար»։ Այս պաշտօնը նա շարունակեց մինչև 1879 թ. հոկտ. 29-ը, երբ 40 անձանց հետ ամենքն էլ յայտնի ընտանիքներից՝ դարձաւ Հայոց առաքելական եկեղեցւոյ դիրքը հետեւելով այն հակումներին, որ զարգացել էր նորա մէջ այս ամբողջ վէճի ընթացքում։

Գ.

Օրմանեանցին և իւր համախոհներին ընդունեց երջանկայիշատակ Ներսէս պատրիարք Վարժապետեանը հետեւեալ խօսքերով. «Օտարին պալատումը հիւր էիք, ձեր խրճթին տէրը եղաք»։

Եւ յիրաւի Օրմանեան դեռ ևս Հայոց եկեղեցւոյ դիրքը չմտած արդէն յայտնի էր իւր ազգային ուղղութեամբ։ Ներսէս Պատրիարքի վստահութեան և դնահատութեան հաւատիք կարող է լինել այն հանգամանքը, որ նա հէնց նոյն օրը նորադարձ վարդապետին ծայրագունութեան աստիճան է տալիս, նշանակելով Ղալաթիայի Ս. Լուսաւորիչ եկեղեցու քարոզիչ։ Նոյն պատրիարքի կարգադրութեամբ վարել է նա ազգային մատենադարանի տեսչութեան, վիճակագրական յանձնաժողովի անդամակցութեան պաշտօնները և գործակցել Ազգային խնդրի մէջ։ Իրրև քարոզիչ աւետարակ Ս. Օրմանեանը մեր եկեղեցական հաւատքների փայլուն ներկայացուցիչներից մէկն է։ Բազմակողմանի ծանօթութեան հետ միացած է նորա մէջ քարոզչական բնատուր տաղանդը։ Նորա տուած քարոզների թիւը մինչև այժմ 2000-ից աւելի է, իսկ այդ հաշիւը

---

*) Մկրտիչ Պէշիկթաշլեանի կեանքն ու գործը. Փարիզ, 1908. եր. 195

**) Անդ եր. 196

նա սկսել է ստանալ Դալաթիայի եկեղեցում իւր վերամսեայ քարոզչութեան ժամանակից։ Նա բանախօսութիւններ է արել նաև ազգային խնդրի շուրջը՝ մեծ համակրութիւն վայելելով ունկնդիրներից։ Այդ բանախօսութիւնները տպագրուած են առանձին տետրակներով հս. ա) «Հայուն անցեալը, ներկայն և ապագայն» 1879, Մասիսի մէջ, բ) «Հայութեան հոգին 16⁰ եր. 39։ գ) «Միութիւն Հայութեան» 16⁰ եր. 50. դ) «Հայ ազգութիւն» 16⁰, եր. 59։ ե) «Հայ երիտասարդութիւն 16⁰, եր. 66 զ) «Կարօտ եմք» 8⁰, եր. 23 վերնագիրներով։ Հէնց միայն քարոզչական և բանախօսական այսպիսի ընդարձակ գործունէութիւնը գնահատութեան արժանի մի կեանք է, բայց նորա անսահման եռանդն ու ընդունակութիւնը աւելի բազմակողմանի արդիւնք է ունեցել իւր հովուական, ուսուցչական, գիտական և պատրիարքական գործունէութեամբ։

Նորադարձ վարդապետն արդէն 1880 թ. այնքան հռչակ ու համակրութիւն ունէր, որ Կարնոյ հայաշատ և կարևոր թեմի առաջնորդ ընտրուեցաւ։ Այդ պաշտօնը նա կատարեց ամենայն յաջողութեամբ եօթը տարի շարունակ, դարկ տալով ազգային զգացման բարձրացման և դպրոցների կարգաւորութեան։ Այս շրջանից յիշելի է մի դէպք, որ շատ բնորոշ է նորա ազգային ուղղութեան և հաւատարիմ ու խելահաս ծառայութեան։ Օրմանեանցը միակ առաջնորդն էր տաճկահայոց մէջ, որ հասկացաւ, թէ Ռուսահայոց վշտին դպրոցների փակման առթիւ վշտակից պիտի լինի և տաճկահայը, միևնոյն ժամանակ և խրախոյս՝ պաշտպանելու եկեղեցւոյ դպրաւոր իրաւունքները։ Նա մի ցոյց կազմակերպեց և յատուկ քարոզ իսօնց այդ մասին։ Նորա գործունէութիւնը Կարնում ազգային և կրթական տեսակէտով կասկած յարուցեց տաճկաց կառավարութեան կողմից և եռանդուն առաջնորդն ստիպուած էր առժամանակ ընդհատել իւր գործունէութիւնն այնտեղ և կառավարութեան պահանջով Պոլիս փոխադրուել, ուր Շիշլիի փառաւոր դերեզմանատան ծաղկման պատճառը դարձաւ, միևնոյն ժամանակ ամեն կիւրակի քարոզելով Բերայի եկեղեցիներում։ Այս ժողովրդասէր և արդիւնաւոր գործունէութեան հետևանքն էր, որ հօտը գնահատեց նրան և խնդրեց եպիսկո-

պրոպացնել, որ և կատարուեց 1886 թ. Մակար կաթողիկոսի ձեռքով։

Դ.

Եպիսկոպոսութիւնից յետոյ սկսւում է գործունէութեան մի նոր շրջան։ Մակար կաթողիկոսի կողմից 188⁷/₈ ուսումնական տարին նա հրաւիրւում է Ճեմարանի առաջնորդական աշակերտների դասատու։ Տարաբաղդաբար մի տարի միայն տեւեց նորա գործունէութիւնն Էջմիածնում, բայց թողեց շատ զգալի ազդեցութիւն։ Այն ծրագիրը, որ ունէր հանգուցեալ Նահապետ եպիսկոպոսը իրրև տեսուչ իւր գործակից Սեղբաք Մանդինեանի և Կարապետ Կոստանեանի հետ,—Մ. Աթոռի ճեմարանը բարձրագոյն դպրոց դարձնել և ազգային հոգւով կրթուած նոր միտքանութիւն կազմել—,մեծ զարկ ստացաւ Օրմանեանի ներկայութեամբ։ Նորա հմտութիւնը գիտութեան մէջ, նորա գեղեցիկ քարոզները, իրատները, աշակերտների համար, աշխոյժ, կենդանի բնաւորութիւնը անսահման եռանդի և տակնու

իւր վանքը պայծառացնել և ուսման կենդրոն դարձնել։ Մաղաքիա Եպիսկոպոսի վերադարձն Էջմիածնից նորա համար մի դիւտ էր։ Տաճկահայերը չունէին իրենց հոգևոր ճեմարանը, որտեղ եկեղեցւոյ պաշտօնեաները պիտի պատրաստուէին ժամանակի պահանջների համեմատ։ Տաճկահայոց հոգևորականների մեծ մասը Երուսաղէմի ժառանգաւորաց դպրոցի սաներ էին կամ պատահական կրթութիւն ստացած մարդիկ։ Բնական է, որ հոգևորականութեան զարգացման մակերևոյթը այդպիսի պայմանների մէջ բարձր լինել չէր կարող, իսկ հին չափով կրթութիւնը անբաւական էր հօտի բազմակողմանի պահանջներին։ Եկեղեցին իւր դատաստանական և քաղաքակրթական դերը կատարել կարող է միայն այն ժամանակ, երբ իւր կոչումն ըմբռնող, և մտքերն ու զգացումները զարգացնելու ընդունակ պաշտօնէութիւն ունի։ Ատանց կենդանի, դիտութեամբ օժտուած, իւր կոչման դաղափարներով տպրող պաշտօնէութեան անհնարին է եկեղեցւոյ հոգևոր բովանդակութիւնը պահել, վերանորոգել, հօտի համար մեռ ու արիւն դարձնել։ Ուստի համար թանդ է հայոց դարաւոր ազգային եկեղեցւոյ յարատևութիւնը, մեր ազգային-հոգևոր վերակենդանութիւնը, նա չպէտք է անտես անէ այս էական հարցը։ Ի զուր է դրական արդիւնք յուսալ եկեղեցական վարչութեան, դպրոցների և կալուածների բարեկարգութեան նկատմամբ, մինչև դիտութեան և կոչման դաղափարներով զինուած պաշտօնէութիւն չունենանք։ Այս հարցը էական է թէ մեր և թէ տաճկահայոց համար։ Ս. Օրմանեան այն սակաւաթիւ անհատներից մէկն էր, որ լաւ ըմբռնել էր այս խնդիրը և պատրաստ էր իւր բոլոր կարողութիւնը նուիրել նորա յաջող լուծման։ Նա Ս. Աչքդեանին առաջարկեց իւր ծառայութիւնը Արմաշում դպրեվանք հաստատելու և այդ գործը զեկավարելու։ Պատրիարքը սիրով ընդունեց նորա առաջարկութիւնը և նշանակեց Նրան փոխ վանահայր և դպրոցի տեսուչ։ Վանահայրը համարւում էր պատրիարքը, որ իբրև նախագահ խնամակալութեան պէտք է աշխատեր նպաստել տնտեսական կարիքներին։ 1889 թուին սկսուեց Ս. Օրմանեանի վանահայրական և տեսչական գործունէութիւնը Արմաշում, որ եօթը տարի տևեց և այնքան օգտակար եղաւ տաճկահայոց հա-

մար։ Նորա օգնականն էր ուսումնական մասում Եղիշէ վարդապետ Դուրեան, որ յետոյ նորա յաջորդը դարձաւ Իրրև դպրեվանքի տեսուչ և պատրիարք։ Ս. Օրմանեանի շնորհիւ Տաճկաստանն այժմ երիտասարդ, կրթուած հոգևորականների մի ստուար խումբ ունի, որոնք առաջնորդական, քարոզչական պաշտօններ են կատարում, անուն են հանել արդէն բանասիրական, հրապարակախօսական և դպրոցական գործունէութեամբ։ Թուել այդ վարդապետների անունները, նորանց վարած պաշտօնները, դրաւոր աշխատութիւնները ու լրագիրներին ցոյց տուած կենդանի աշխատակցութիւնը, լաւագոյն վկայականը կը լինէր Ս. Օրմանեանի վարժապետական գնահատելի գործունէութեան։ Բայց այդ անկարող ենք անել տեղի աղութեան պատճառով։ Մենք դիտենք, որ Պոլսում ևս արմաշական վարդապետները իրենց հակառակորդները են ունեցել, ինչպէս այստեղ ճեմարանականները. նախանձը, տգիտութիւնը, մոլորութիւնը միշտ իրենց դլուխները են բարձրացնում, երբ մի նոր ստեղծագործող շարժում, կենդանութիւն է սկսում կեանքի մէջ։ Ընչին, մանր անձնասիրութիւններ, անընդունակ ըմբռնելու կատարուող գործը իւր ամբողջութեամբ, քննադատ են հանդիսանում մանրամասնութիւնների, լուսոյ փոխարէն միայն նորա արձակած ստուերն են տեսնում և իրենց ուժերը լարում խեղթելու նորաբողջ կեանքը։ Ս. Օրմանեանի գործունէութիւնն ևս այս կողմից քննութեան և կասկածի է ենթարկուել. ոմանք արմաշական վարդապետներին չափազանց աղատամիտ են համարել և հայոց եկեղեցւոյ դոյութեան համար վտանգաւոր, ոմանք ընդհակառակ Օրմանեանցին կղերական և կաթոլիկ հոգին Հայոց մէջ պատուաստելու պատճառ ընդունել։ Ճշմարտութիւնը այս երկու հակադրութիւնների մէջ տեղն է։ Ս. Օրմանեան ոգևորուել է Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ նոր պաշտօնէութիւն պատրաստելու դաղափարով և այս նորա համար լուսոյ պակ պիտի համարել, որ կոյրերի համար տեսանելի չէ։ Բայց Արմաշը ոչ միայն վարդապետություններ է պատրաստել, այլև քահանաներ և ուսուցիչներ։ Արմաշի, ինչպէս և այստեղ Մ. Աթոռի ճեմարանի էական կոչումը պիտի համարել հոգևորականներ պատրաստելու հրատապ

խնդիրը. չշարունակուի այդ գործը, որ այստեղ է սկսել է հանգուցեալ Նահապետ եպիսկոպոսը և Տաճկաստանում Ս. Օրմանեան, չդիտեմ թէ ինչ կըլինի Հայոց եկեղեցւոյ ապագան։ Մեր հարևան Նեստորականների, Յակոբիկների և արևելեան ուրիշ մանր եկեղեցիների օրինակը կենդանի ապացոյց է, թէ ինչ է նշանակում եկեղեցի՝ ոդէտ, խաւարի մէջ խարխափող հոգևորականութիւնը։ «Եթէ աղն անհամի, ի՞ւ յաղիցի»։

Ե.

Ինչպէս ասացինք, Ս. Օրմանեանի վարժապետական գործունէութիւնն Արմաշում եօթը տարի տևեց։ Նոյեմբերի 6-ին 1896 թ. նա կ. Պոլսոյ պատրիարք ընտրուեցաւ, որ վարեց այդ պաշտօնը մինչև 1908 թուականի յուլիսի 16-ը՝ մօտ 12 տարի։

Տարբերան ճշմարտութիւն է, որ պատմական երևոյթները պէտք է դատուին և հասկացուին տեղի և ժամանակի պայմանների համաձայն։ Երևոյթն ինքնըստինքեան անհասկանալի է, մինչև չլուսաբանուին կապ ունեցող հանգամանքները։ Միայնակ նահանգների կամ Անգլիայի մէջ իշխող հայեացքներով կշռել Պարսկաստանում կամ Չինաստանում պատահող դէպքերը, նշանակում է հասկացողութիւն չունենալ պատմութիւնն ու կեանքն ըմբռնելու։ Այսպէս և Ս. Օրմանեանի պատրիարքութիւնը գնահատելու համար երբէք չպէտք է մոռանանք այն *բացառիկ եւ ծանր ժամանակը*, երբ նա կոչուած էր հովուելու տաճկահայ ժողովուրդը։

189⁵/₆ թուականին կատարուել էր Հայոց մեծ կոտորածը. պատմութեան մէջ չտեսնուած և չլսուած մի դէպք էր այդ։ Մեծ պատերազմներն այնպէս աղետաբեր չեն լինում պետութիւնների համար, ինչպէս այդ կոտորածը հայ ժողովրդի համար եղաւ։ Մայրաքաղաքից սկսած բոլոր հայաբնակ քաղաքներն ու գիւղերը սրածութեան էին ենթարկուել կամ աւարառութեան։ Սուլթան Համիդը կատաղած էր, և այդ կատաղութեան մէջ նա կամենում էր ոչնչացնել հայ տարրը, դորա հետ լուծելով և հայկական խնդիրը, որ այնքան դլխացաւանք էր

պատճառում նրան 1878-ից սկսած։ Հօրը ու թուրք ամբոխը, վայրենի քուրդն ու չերքեզը միացած՝ գրոհ էին տալիս հայ անզէն և անպաշտպան ժողովրդի վրայ. կոտորում, այրում, յափշտակում, պղծում հայ տղջիկներին և կանանց։ Ամբողջ գիւղերով բռնի մահմեդականացնում էին, եկեղեցիներն ու վանքերը կործանում, պղծում կամ մզկիթ դարձնում, իսկ քահանաների և վարդապետների գլուխը մոլլայի փաթեթ ծածկում, վարդապետներին ամուսնացնում իրրև անարգանք քրիստոնէական կրօնի՝ երկու կին տալով։ Սարսափը տիրել էր ամենուրեք. յեղափոխական տարրերն իսկ, որ այսօր այնքան անխիղճ քննադատ են հանդիսացել Ս. Օրմանեանի խաղաղ գործունէութեան, բոլորը փախել էին և լուել։ Նորա ոչ միայն կորցրել էին հայ ժողովրդի աչքում իրենց համարումը, այլև հէնց իրենց մէջ հաւատ դէպի իրենց գործը։ Եւ միանդամայն ընական էր այդ հոգերանօրէն. այս կոտորածը Հայոց վերայ 150-200 հազար կեանք էր նստել. տասնեակ հազարներով որբեր ու այրիներ մնացել էին մերկ, քաղցած և անպաշտպան, տասնեակ հազարներով ընտանիքներ թողնում հայրենիք, տունտեղ, կալուած և օտար երկիրներ գաղթում և նոցա տեղ ընակութիւն էին հաստատում մահմեդականները։ Հայ ժողովրդի մահուան տաղնապն էր այն. ինչ կը լինէր նորա վիճակը, եթէ նոյն թափով դարձեալ մի երկու տարի չարունակուէին այս բարբարոսութիւնները։ Սորա վերան աւելացնենք, որ կառավարութիւնը մեղադրում էր նաև պատրիարք Ս. Իզմիրլեանցին, համարելով նրան յեղափոխական շարժման եւ ապըստամբութեան պաշտպան եւ խրախուսող։ Պատրիարքի հաստատակամութիւնը արժանի էր հիացման, բայց նորա բոլոր ջանքերը բաղխում էին Սուլթանի և տաճիկ կառավարութեան անսասան ժայռին և ոչնչացնում։ Եւրոպական դեսպանները, որ ակնատես էին տաճիկ կառավարութեան և Սուլթանի անլուր չարագործութեան մի բուռն ժողովրդի դէմ, ոչ միայն անտարբեր հանդիսացան Մատթէոս պատրիարքի բողոքների դէմ այլ և ի վերջոյ զլացան նոյնիսկ որևէ խորհուրդ տալ նորան։ Նա ստիպուած էր հրաժարուել, տեսնելով որ այլ ևս օգտակար լինել չի կարող իւր ժողովրդին։ Հրաժարա-

կանից յետոյ Սուլթանը նորան աքսորեց Երուսաղէմ, ուր և մնաց մինչև հայրապետական Աթոռ բարձրանալը։

Այս դէպքերից յետոյ և այսպիսի պայմաններում պատրիարք է դառնում Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան։ Ինչպիսի անէր նորընտիր պատրիարքը, կարող էր և օգտակար կը լինէր հօտի համար իւր նախորդի խիղճի քաղաքականութիւնը։ Ս. Իգմիրլեանի քաղաքականութիւնը ոչ միայն արդիւնք էր իւր բնաւորութեան, այլև նորա պատրիարքութեան ժամանակ իրար յաջորդող դէպքերի։ Նա պէտք է բողոքէր, անընդհատ կը լինէր նորա կողմից լուութիւնն ու համակերպման քաղաքականութիւնը։ Բայց բոլորովին այլ պայմանների մէջ էր Ս. Օրմանեանը։ Դեռ ևս երկինք էր բարձրանում կրակի և աւերի ենթարկուած քաղաքների և գիւղերի ծուխն ու փոշին, անտէր մնացած որբերի և այրիների ճիչն ու աղաղակը. արիւնոտներկ փողոցներից և դաշտերից չէին սրբուած կատարուած դաղանութիւնների հետքերը, ժողովուրդը չէր կարելի երկրորդ անգամ այդպիսի *կատաստրոֆի* ենթարկել։ Ո՞վ կարող էր երաշխաւորել, որ Սուլթանն ընդունակ չէ կրկնելու իւր «դասը»։ Պէտք էր յարատեւութեան մի նոր եղանակ ընտրել, խոհեմութեան և զգուշաւորութեան ճանապարհ, որպէսզի արիւնաքամ և հոգեվարք ժողովուրդը փոքր ինչ շունչ առնէր և ստացած հարուածներից կազդուրուէր։ Եւ նա կատարեց իւր վրայ դրուած դժուար պարտականութիւնը, որ ուրիշների համար անասելի կը լինէր և կը խարտակուէին նորա ծանրութեան տակ։

Ս. Օրմանեանը մեկ մարդն էր, որ գլուխ հանել կարող էր այս տարաբաղդ ժամանակի մէջ։ Զենք կարող վայելուն համարել նորա պատրիարքութիւնն ամեն կողմերով. նորա ընդարձակ զարգացումն ու գիտական պատրաստութիւնը, անսահման եռանդն ու ճկուն խելքը, նուրբ քաղաքավարութիւնը *ուրիշ պայմաններում* շատ աւելի փառաւոր արդիւնք կարող էր տալ։ Բայց ինչ որ նա արաւ տաճկահայ ժողովրդի մի այնպիսի ծանր ճգնաժամում, արդարութեամբ պէտք է գնահատուի, անկարող կը լինէր կատարել մի ուրիշը։ «Ազգին ամենէն փոթորկալի վիճակին մէջ գիս պատրիարք կարգեցին»։

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄ. ԹԻՖ

նա «Արևելք»-ի աշխատակից Եր. Սրմաքէշխանլեանի հետ հրաժարականից յետոյ ունեցած խոսակցութեան ժամանակ։ «Փոթորկի առնն նաւապետ մը ոչ հովերը կընայ կեցնել, ոչ ալիքներու կատաղութիւնը հանդարտեցնել, իր ջանքը կ'ըլլայ այդ վտանգէն նաւը անցնել և նաւահանգիստ հասցնել. հա, երբեմն կը պատահի որ մէկ կայմ մը կը կոտրի կամ առագաստ մը կը պատռի։ բայց առոնք հոգ չեն, եթէ նաւուն ամբողջութիւնը չի վնասուիր։ Ես այս տեսակ նաւու մը նաւապետն էի. բոլոր ջանքս թափեցի, որ նաւը ողջամբ նաւահանգիստ հասցնեմ. ու ասիկա ըրի, այս մասին խիղճս հանդարտ է»։ Եւ այս բնութագրումը միանգամայն համապատասխան է նորա ժամանակի և գործունէութեան համար. իբր 12 տարուայ պատրիարքութեամբ կառավարեց հայ ժողովրդի վտանգուած նաւը, խուսափելով ժայռերից ու ծանծաղուտներից, մինչև եկաւ 1908 թուի յուլիսի 11-ի յեղափոխութիւնը և դահընկէց արաւ Սուլթան Համիդին, հայ ազգի արիւնարբու թշնամուն։

Փորձենք ամփոփել այդ գործունէութիւնը։

Զ.

Նորընտիր պատրիարքի առաջին գործը պիտի լինէր պատրիարքարանի և Բ. Դուռն խղուած յարաբերութիւնները նորոգել և փոքր ինչ կանոնաւորել. նախկին յարաբերութիւնն այլ ևս շարունակել անկարելի էր։ Ս. Օրմանեան, ինչպէս և առհկահայոց բանիրուն մասը, համոզուած էր, որ այլ ևս անհնար է և վնասակար տիրող պայմանների մէջ քաղաքական ինքնավարութեան պահանջներ դնել Սուլթանի և պետութեան առաջ, երբ նրանք մահուան պատերազմ էին հրատարակել հայ տարրի գոյութեան դէմ և ազգը մահուան օրհասի մէջ ձգել։ Պէտք էր այդ օրհասի ժամն անցկացնել, ազգն ապրեցնել աւելի լաւ ապագայի համար։ Խակ և տաքկլուխ երիտասարդներին է վայել ազգի բաղդը չկշռուած և չչափուած արկածների ենթարկել. իսկական առաջնորդների և խելահաս անձանց կոչումը պիտի լինի «ընդ հուր և ընդ ջուր ի հանդիստ հանել նրան։ Այսպէս էր ըմբռնել իւր կոչումն ու պարտականութիւնը Ս.

Օրմանեանը և այս փաղափարով էլ առաջնորդուեց և վարեց ազգային գործերը։ Նա հաշտութեան ճանապարհը բռնեց յօգուտ ազգի և եկեղեցւոյ շահերի. յեղափոխական տարրերին չկամեցաւ երես տալ, որովհետև նրանց խակ և անփորձ գործողութեանց արդիւնքն էր մասամբ 1895—6 թուերի կոտորածն ու աւերը։ Յեղափոխական տարրերն էլ նրան ներել չկարողացան, և ոչ միայն մահուան փորձ արին նորա կեանքի դէմ նոյնիսկ եկեղեցւոյ մէջ, այլ և նորա անձնական թշնամիների հետ միացած 1908 թուի յուլիսի 16-ի և 25-ի սկզբանները տարբերեցին, որ խայտառակութեան անջինջ յիշատակ պիտի մնայ մեր ազգային պատմութեան մէջ։

Ինչպէս տասնինք պատրիարքն աշխատեց կառավարութեան հետ խղճած յարաբերութիւնը հնարաւորութեան չափ կանոնաւորել. քաղաքագէտ և խելօք պատրիարքին յաջողուեց նոյն իսկ Սուլթանի արտաքին բարեհաճութիւնը վաստակել, իսկ այդ հանգամանքը շատ էական նշանակութիւն ունէր Բ. Դուռն և նախարարութիւնների կամայականութիւնների առաջն առնելու խնդրում. կոտորածները դադարեցան. կառավարութիւնը արդարանալ չէր կարող թէ ապստամբների հետ գործ ունի։ Պատրիարքը կամենում էր օրէնքի սահմանների մէջ պաշտպանել իւր ազգի շահերը։ Անշուշտ նա անկարելին կարող չէր անել. օսմանեան պետութիւնը իւր դիւով շարունակում էր հայամերժ քաղաքականութիւնը. հայը վնասակար էր և անհաւատարիմ տէրութեան աչքում։ Հալածանքները, բանդարկութիւններն ու ճնշումները շարունակուեցան և Ս. Օրմանեանի պատրիարքութեան օրով. բայց նորա այնպէս օրհասական չէին և մասսայական բնաւորութիւն չունէին ինչպէս առաջ։ Պատահեցան և փոքր չափով կոտորածներ, ինչպէս Սասունի երկրորդ չփոթութեան և Վանի վերջին դէպքերի ժամանակ, բայց այդտեղ պատասխանատուն պատրիարքը չէր, այլ յեղափոխական այն խակ տարրերը, որոնք ի հաշիւ չէին առնում դժբաղդ ժողովրդի նիւթական և բարոյական քայքայուած վիճակը, անպաշտպանութիւնը։ Ի զուր էին անցնում պատրիարքի յորդորները, թէ ազգը վիրաւոր է և արիւնաքամ. ընդունակ չէ ուժգին յուզումներ տանել — և թէ ազնիւ գործ

չէ այնպիսի դրդումներ յառաջ բերել, որի հետևանքին իրենք չեն ենթարկուում, այլ ժողովուրդը։ Զլինելը յուլիսի 11-ի անապատելի յեղաշրջումը, ով կարող է ասել թէ Վանում մի նոր և ահեղ կատաստրոֆի լուրը չպէտք է լսէինք։

Սուլթանի կառավարութիւնը մինչև իսկ փորձեր արաւ կրճատելու հայոց արտօնութիւնները, ոչնչացնելու սահմանադրութիւնը, դրաւելու կալուածները ու իւր իշխանութեան ենթարկելու դպրոցները, բայց նրբամիտ պատրիարքը, ինչպէս կը տեսնենք, ամեն տեղ կարողացաւ գործը ձգձգել, քննցնել կամ յաղթող հանդիսանալ։ Նախարարները զբաղում էին, որ գործ ունին մի խելօք և քաղաքագէտ պատրիարքի հետ, որին չեն կարող արհամարհանքով վերաբերուել, որքան էլ ապրուած լինէին հայաջինջ քաղաքականութեամբ։ Պատրիարքի բարձր կրթութիւնն ու լեզուագիտութիւնը, նախարարների, դեսպանների և օտար դաւանութեանց պետերի հետ պահած անձնական վայելուչ յարաբերութիւնը, դիւանագիտական նուրբ հասկացողութիւնը շատ օգնեցին նրան կրակի մէջ իսկ եղած ժամանակ շոգանակները հանել իւր ազգի համար։

Նոր պատրիարքը իւր նախորդներից մի շատ ծանր ժառանգութիւն էր ստացել. այդ *սահմանադրութեան վերաքննութիւնն* էր։ Սահմանադրութիւնից զգոյշ էին թէ հայերը և թէ տաճիկ կառավարութիւնը, ի հարկէ բոլորովին տարբեր պատճառներով։ Հայերը կամենում էին ունենալ մշակել և կոնոնաւորել այն թերութիւնները, որ զգացել էին երկարամեայ գործադրութեան ժամանակ. իսկ բռնապետական կառավարութեան համար աչքի փուշ էր այն, որ պէտք էր հանել և դէն ձգել։ Սահմանադրութեան վերաքննութիւնը մի միջոց էր կառավարութեան համար ոչնչացնելու այն։ Սակայն պատրիարքը շատ լաւ էր հասկանում այդ, և պատիւ նորան, որ կառավարութեան պահանջների հակառակ կարողացաւ քննցնել այդ խնդիրը և անապատ իւր յետնորդին հասցնել։ Ճշմարիտ է, Ս. Օրմանեանը, չկարողացաւ ազգային երեսփոխանական ժողով գումարել, որովհետև կառավարութիւնը իրաւունք չէր տալիս և պահանջում էր նախ սահմանադրութիւնը վերաքննել. հաս-

տասել տալ և ապա նոր կանոնադրութեան հիման վրայ ժողով դումարել, բայց թէ Պոլսում և թէ դաւառներում կատարուել են թաղական և դաւառական ընտրութիւններ, գործել են ժողովները։ Գաւառ ընթերցողներից շատերին յայտնի չլինի, թէ նա ինչ միջոցներով է ստիպուած եղել դիմելու սահմանադրութիւնը պահելու համարէր պատրիարքութեան տասներորդ տարին արդէն վախճանուել էին Խաս. ժողովի անդամներից շատերը և անհրաժեշտ էր կենդրոնական վարչութիւն կազմել, որ ի հետ ըստ սահմանադրութեան պատրիարքը պէտք է վարէ գործերը։ Սովորական երեսփոխանական ժողով դումարել անհնարին էր, նա յաջողացնում է իւր ազնիւմրութեան անունով միայն պատրիարքարանում ժողով անել 1906 թ. յուլիսի 25-ին նախօրօք հրաւիրագրերը և ընտրողական ցուցակներ ցրուելով և նոր վարչութիւն կազմել և ապա հաստատել տալ սէրութեան կողմից։ Ի հարկէ չարամիտ և գործին անտեղեակ մարդիկ քիչ չօգտուեցան այս հանդամանքներից պատրիարքին հակասահմանադրական հրատարակելու, բայց այդ զրպարտութիւնը ջնջելու համար բաւական է յիշել, որ կառավարութիւնն արդիլել էր նոյն իսկ «սահմանադրութիւն» բառը գործածել, ուր թէ սահմանադրութեան անունով ազգային ժողով դումարել։ Պոլսոյ հայ թերթերը արդիլուած բառի իմաստը արտայայտելու համար հնարել էին «պատրիարքարանի օրէնք» խօսքերը։

Տաճկահայերն ևս ունեցել են իրենց *կալուածական* եւ *դպրոցական խնդիրները*։ Պատական օրէնքով, ինչպէս մըզկիթները, այնպէս էլ եկեղեցիները կարող էին իրենց *Վաքֆներն* ունենալ, այսինքն կալուածական նուէրներ ընդունել կրօնական և մարդասիրական հաստատութեան որևէ պէտքի համար։ Վաքֆների տեսակները երկու են. *իճարէի վահիտ* և *իճարէթէին*. Առաջին տեսակ կալուածները ծախուել չեն կարող. իսկ երկրորդները կարող էր ծախուել և ժառանգներին անցնել։ Հայոց եկեղեցոյ կալուածները այս երկրորդ տեսակին են վերաբերում մեծ մասով և աւանդաբար արձանագրուած են սրբերի անունով։ Օրէնքը պահանջում էր, որևէ անձն ցոյց տալ իրրև տեղեկանատէր. քրիստոնեայ եկե-

զեցիներն էլ սեպհականատէր են ցոյց տուել այն սուրբը, որի անուան նուիրուած է եկեղեցին կամ վանքը։ Օրինակ Երուսաղէմի կալուածներն ուրանուագրուած են որպէս սեպհականութիւն Զիրեղիայի որդի Յակոբոսի, Կ. Պոլսի մայր եկեղեցունը Յովակիմի դուստր Մարիամի հայրն։ Այս հանգամանքը, որ լաւ ծանօթ էր կառավարութիւնն, արդարացուած զարուր աւանդութեամբ, հարծանքի չրջանում այլևս ընդունելի չէր, և մեծ վտանգ էր սպառնում եկեղեցական կալուածներին։ Որովհետև սրբերը կենդանի անձնաւորութիւններ չեն, ուրեմն նրանց կալուածներն անտէր են և տէրութեան հասանելի։ Սակայն պատրիարքը տեղի չտուաւ և այս ծանր կացութիւնից կալուածները վերջնականապէս ազատելու համար՝ ծրագրել էր վաճառել բոլոր *իմարէթէնով կալուածները* և վերածել *իմարէի վահիտէ դրութիւն*՝ ժամանակի պատրիարքի խնամակալութեան տակ։ Դորանով կազատուէին և այն կալուածները, որ այս կամ այն անձի խնամակալութեան էին յանձնուած և նրանց մահուան դէպքում որդիները կամենում էին յափշտակել իրրև ժառանգներ։

Աւելի դժուար էր դպրոցական խնդիրը։ Որէնքը քրիստոնեայ եկեղեցիների դպրոցների գոյութիւնը չէր ճանաչում. երկու տեսակ դպրոցներ միայն ընդունելի են՝ պետական և անհատական։ Վերջին տեսակները մասնաւոր մարդկանց սեփականութիւն են և բանալ կարելի էր պետութիւնից արտօնութիւն առանալով։ Բրիստոնէական եկեղեցիներն՝ ազատ պետական հսկողութիւնից՝ իսկզբանէ անտի ունեցել են իրենց դպրոցները։ Բայց վերջին ժամանակ Տաճիկներն էլ հետևելով ռուսաց օրինակին՝ կամեցան խառնուել դպրոցական գործի մէջ։ Յունաց պատրիարքարանը բոլորից կառավարութեան դէմ վարելով բոլոր եկեղեցիներն ու դպրոցները և ի վերջոյ իրաւունք ստացաւ յայն դպրոցների վերահսկողութիւնը պատրիարքի և միտրապոլիտների իրաւասութեան վերապահելու։

Հանգուցեալ Աշղեանը չկարողանալով նոյն իրաւունքներն առանալ, վտանգի առաջն առնելու համար, Կ. Պոլսոյ ուսոյ բահանաներին թեմական վարժարանների ներկայացու-

ցիչներ նշանակից, որով և հայ գպրոցները համարում էին որպէս մասնաւոր անհատների սեպհականութիւն։ Սրբազան Օրմանեանին շատ ջանք նստաց, մինչև որ այս հայտարարի քաղաքականութեան և հալածանքի ժամանակ կարողացաւ ընդունել տալ, որ հայ գպրոցներն էլ յոյների նման մայրաքաղաքում ենթարկուին պատրիարքի, իսկ գաւառներում առաջնորդի իրաւասութեան։ Կառավարութեան պահանջներից մէկն էլ այն էր, որ ուսուցիչների հաստատութիւնը իւր ձեռքով լինի և իրաւունք ունենայ լիապէս քննիչներ նշանակելու հայ գպրոցների վերայ։ Առաջին կէտի հետ պատրիարքը չհամաձայնուեց, գիտենալով, որ այդ հանգամանքը վատնդաւոր միջոց կը լինի կառավարութեան ձեռքին, իսկ երկրորդն ընդունում էր այն պայմանով, որ քննիչները ոչ մի կարգադրութիւն անելու իրաւունք չունենան, այլ իրենց դիտողութիւններն ու բողոքները յայտնեն պատրիարքին։

Յեղափոխական տարրերի և նորա թշնամիների կողմից յաճախ դժգոհութիւններ են լսուած, թէ Ս. Օրմանեանը չէ բաղդել կառավարութեան խոստութիւնների դէմ և չէ աշխատել թեթեւացնել ժողովրդի ծանր վիճակը։ Սակայն այդ դէմ է ճշմարտութեան և կատարուած իրողութեան։ Ոչ մի պատրիարքի ժամանակ գուցէ այնքան դիմումներ և բողոքներ չեն եղել բերանացի և գրաւոր, ինչպէս Ս. Օրմանեանի օրով։ Ժամանակը չար էր ի հարկէ և եռանդուն պատրիարքի համար մեղադրանքներ անելու. կառավարութիւնը հայ տարրի վերայ նայում էր որպէս թշնամու և հալածանքի արժանի տարրի վերայ։ Բայց և այնպէս նա կարողացել է շատ յաճախ իւր արդար ձայնը լսելի անել խուլ կառավարութեան ականջին։ Հայերը տարեական հարկից զատ՝ վճարում են և զինուորական տուրք։ 1895—6 թուի աւերումից յետոյ այդ տուրքի գանձումը անտանելի բան էր ժողովրդի համար. Պատրիարքի միջնորդութեամբ կառավարութիւնը դիջաւ այդ տուրքի գանձումը յետաձգել երեք տարով։ Ժամանակի կամ թշնամու ձեռքով խարխլած էին կամ աւերուած շատ եկեղեցիներ, վանքեր և դպրոցներ, բայց կառավարութիւնը իրաւունք չէր տալիս նորոգելու կամ շինելու։ Հայի համար անկարելութեան չափ

դժուար էր դարձել երկրի մէջ իսկ մի դատաւոր միւսն անցնել, բանտերը լցուում էին հայ կալանաւորներով։ Կառավարութիւնը դժուարութիւններ էր յարուցանում Սպոյ կաթողիկոսական թափուր աթոռի համար ընտրութիւն անելու։ Նա կամենում էր Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը պատրիարքարանից բաժանել և իբրև առանձին հասարակութիւն ճանաչել Կիլիկիայինները, Պատրիարքի 1899 թուի բուռն բողոքների և պատճառաբանեալ հրաժարականի հետևանք էր, որ իրաւունք տրուեցաւ եկեղեցիներն ու վանքերը նորոգելու, դպրոցական և բարեգործական հաստատութիւնների համար չէնքեր կառուցանելու և Կիլիկիոյ համար Շկաթողիկոսական ընտրութիւն կատարելու։ Բանտարկեալներից շատերն արձակուեցան բանտից և ժամանակաւորապէս գոնէ երթևեկութիւնը փոքր ինչ թեթևացաւ։ Նա բողոքել է նոյնպէս իւր ժողովրդի քաղաքական ծանր վիճակը թեթևացնելու նպատակով՝ առանց խրախուսիչ հանդիսանալու յեղափոխականների անմտութիւններին կամ «վճարելու նրանց կատրած ազգակիների համար»։ Վերջին հրաժարականից մի քանի ամիս առաջ նրա գեղեցիկ և պատճառաբանուած բողոքը հայոց քաղաքական անտանելի կացութեան մասին մի գեղեցիկ ապացոյց է մեր ասածին։ Իւր բողոքներով նա օգնութեան է հասել նոյնիսկ հանդուցեալ Մկրտիչ կաթողիկոսին եկեղեցական կալուածների դրաման ժամանակ և նրա մտածուած, նուրբ քաղաքականութեամբ գրած թուղթը հիմք եղաւ կաթողիկոսի գրած մեմորանդումին։ Պօլսում էլ գրաւոր և բերանացի ուսուցց դեսպանին դիմեց տաճկահայոց բողոքը յայտնելու ընդհանուր ազգային կալուածները գրաւելու համար և կայսրին ուղղակի ծանուցագրեր ուղարկուեց այդ խնդրի առթիւ։ Մի գրքոյկ էլ հրատարակեց՝ Les bien de l'église arménienne en Russie, Berlin, 1904 8°, եր. 25 և ցրուել տուեց ամեն կողմ։

Գ.

Բայց Ս. Օրմանեանի վարչական ընդունակութիւնները և կենդանի հանդէսը երևեցան նեբքին կառավարութեան և տեղծագործող շինարարութեան մէջ։ Պատրիարքական աթոռի

վերայ բարձրանալու առաջին օրից նորա առաջ դրուած էր հայրական խնամատարութեան մի մեծ գործ։ Տասնեակ հազարներով որբեր և այրիներ մնացել էին մի կարճ հայի կարօտ, չքաւորութիւնն ու սովը սպառնում էին ոչ պակաս մի նոր կոտորած յառաջ բերել։ Երկրագործ գիւղացին զրկուած էր իւր ունեցից և գործիքներից հայ վաստակելու համար։ Եթէ պատերազմը ոչինչ արած չլինէր, *որբերի եւ կարօտեալների համար ցոյց տուած սրտացաւութիւնն ու խելացի նամակը միայն բաւական էր փառաւորելու նրա անունը։* Գթութեան գործը նոյնպէս խելացիութիւն և բանաւոր կազմակերպութիւն է պահանջում նեղութեան և բարոյական օգտակար դառնալու համար, ինչպէս և ամեն մի գործ։ Անկանոն և անսիստեմ կատարուած բարեգործութիւնը, նեղեալին նպաստը կարող է վնասակար լինել բարոյական տեսակէտից, խրախուսելով ձրիակերութիւնն ու անամօթ մուրացկանութիւնը։

Ս. Օրմանեանը իրրև աշխարհատես և կրթուած մարդ, իրրև եկեղեցւոյ պատմութեան լաւ ծանօթ եկեղեցական, գիտէր գթութեան գործի պատմութիւնը, ազգաբնակի խնամատարութեան սիստեմները արևմտեան քաղաքակիրթ ազգերի և եկեղեցիների մէջ։ Եւ ահա այդ ծանօթութեան արդիւնքն էր *որբանոցների* երևան գալը և նրանց *կազմակերպութիւնը* տաճկահայոց մէջ։ Գաւառական կենտրոններում և վանքերում որբանոցներ հաստատուեցան ոչ միայն ազգի թշուառ և անտէր զաւակների նեղեալին կեանքը փրկելու, այլ և դաստիարակելու։ Որբերը ուսման հետ պիտի սովորէին նաև որ և է արհեստ, որպէսզի հասատատութիւնից դուրս գալուց յետոյ, կարողանան մաքուր աշխատանքով հայ վաստակել։ Սովորական արհեստներից՝ կոշկակարութիւնից, հիւսնութիւնից, դերձակութիւնից դատ խրախուսում էին այնպիսի արհեստները, որոնք տեղական արդիւնաբերութեան հետ կապ ունին, ինչպէս կոտաագործութիւն, դորգագործութիւն, աթոռագործութիւն և այլն։ Որբանոց-արհեստանոցները պարտաւոր էին իրենց պատրաստած նիւթերի նմուշներն ուղարկել պատրիարքարան։ Որբերն ու որբուհիները իրենց ուսումն աւարտելուց յետոյ նոյնիսկ մի փոքրիկ նպաստ էին ստանում իրենց որ-

հետը բանեցնելու համար։ Ս. Պատրիարքը յատուկ հրահանգ և կանոնադրութիւն էր հրատարակել որբանոց-արհեստանոցների բացման, կառավարութեան և պահպանութեան համար։ Ուրախալին այն էր, որ այդ հաստատութիւններից մի քանիսը հիմնուած էին վանքերում, և նրանց եկամուտները գործադրւում էին այդ հաստատութիւնների համար, նորոգելով այդպիսով վանքերի հին, քաղաքակրթական—բարեգործական կոչումը։ Ս. Պատրիարքին այս խնդրում մեծ աջակցութիւն ցոյց տուեց հանգուցեալ Գրիգոր Զանչեանը, որ իւր Братская помощь ժողովածուի հրատարակութեամբ կարողացաւ մօտ 60,000 բուբլի հաւաքել և ուղարկել յօգուտ որբերի. 12 որբանոց պահւում էին միայն Զանչեանի անունով։ Սակայն պատրիարքի եռանդուն ջանքերի, անձնական ընդարձակ ծանօթութիւնների չնորհիւ նուիրատուութիւններ էին լինում նաև բազմաթիւ մասնաւոր անձնաւորութիւններից և հասարակութիւններից։ Նոյն իսկ Եւրոպայից և Ամերիկայից փողեր էին ուղարկւում այս նպատակի համար։ Եւ այդ նպատակները գործադրուեցաւ շատ խելացի կերպով. որբանոցներ և արհեստանոցներ բացուեցան Վանում, Բիթլիսում, Կարինում, Մուշում, Բայազիտում, Ակնում, Արարկիրում, Սեբաստիայում, Մարաշում, Մալաթիայում, Տիգրանակերտում... մի խօսքով գաւառական բազմաթիւ կենտրոններում կամ վանքերում։ Ս. Օրմանեանի հրատարակած «Նպատակ Յանձնաժողով» գրքոյկից երևում է, որ բացուած որբանոցների թիւը եղել է 35, իւրաքանչիւրի մէջ պատսպարուել, սնունդ ու կրթութիւն են ստացել, արհեստ սովորել հարիւրից աւելի որբեր. պատսպարուածների ընդհանուր թիւը հասել է 4000-ի։ Որբանոցների վերայ գործադրուել է 300,48 04½ օսմ. լիրայ, ուրեմն մօտ 300,000 բուբլի։

Որբանոցների բացման և վերին հսկողութեան մէջ օժանդակ էր պատրիարքին Նպատակ յանձնաժողովը. այդտեղ էին կենտրոնանում որբերի և կարօտելոց համար հաւաքուած նուիրատուութիւնները և այդտեղից էին բաշխւում հաստատութիւններին և կարօտեալներին։ Բայց ամէն ինչ կատարւում էր

պատրիարքի անունով, նրա անմիջական հսկողությամբ եւ մասնակցությամբ, որովհետեւ անդամները վախենում էին, թէ լրտեսների կողմից կը մատնուին իրրեւ հասարակական կամ յեղափոխական նպատակների համար ժողովարաններ։ Պատրիարքն այդ երկիւղը չունէր, իւր կոչման հետ կապուած մի պարտաւորութիւն էր յայտարարում յետին թշուառների եւ աղքատների համար ողորմութիւն ստանալը։ Նպաստից յանձնաժողովն էր նաեւ օժանդակութիւն հատցնում կարօտեալներին։ Պօլսոյ լրագրների մէջ միշտ տեղեկութիւններ կարելի էր գտնել ժամանակին, թէ ինչքան նպաստներ է ուղարկել պատրիարքարանը, մանաւանդ կոտորածին հետեւող առաջին տարիները, այլ եւ այլ տեղերի կարօտեալներին եւ որբանոցներին։ Գիւղական կարօտեալներին յատկապէս նպաստ էր որբում լծկան եղներ եւ սերմացու հայթայթելու համար։ Եթէ պատրաստ դրամը չին ունենում փոխառութիւն են անում սուր կաբիներին անմիջական օգնութիւն հատցնելու։ Եւ եթէ յանկանէ յանուանէ յիշելու լինենք, կը տեսնենք, որ համարեա բոլոր թեմերը պատրիարքարանից հազարաւոր ոսկիներով նպաստ են ստացել տարիների ընթացքում, յատկապէս մեծ Հայրի-Վանի, Բաղէշի, Ակնայ, Տիգրանակերտի, Աղթամարի... եւ այլն թեմերը։ «Նպաստից Յանձնաժողով» գրքոյկը մեզ ստոյգ եւ կանոնաւոր տեղեկութիւն է տալիս թէ որ գաւառներն ու բաղաքները որքան նպաստ են ստացել, ինչ նպաստների համար եւ ինչ եղանակով մատակարարուել։ Կարօտեալներին բաշխուած գումարը եղել է 27857, 90½ օսմանեան լիրայ։

Պատրիարքը մեծ ուշադրութիւն էր դարձնում նաեւ դպրոցների ծաղկման վերայ։ Զննելով կոտորածների ժամանակ ժողովրդի կրած նիւթական անասելի վնասներին, հալածանքների եւ ճնշումների պատճառով յառաջ եկած չքաւորութեան, վաճառականութեան անկման, դպրոցները բաղմանում էին, յատկապէս Ս. Օրմանեանի աշակերտ Արմաշական երիտասարդ վարդապետների աշխատութեան շնորհիւ։ Կեդրոնից նպաստներ էին ուղարկում գաւառական աղքատ դպրոց-

ներին կամ պահում էին միմիայն պատրիարքարանի օժանդակութեամբ։ Եւ այդ նպատակները միայն դրամական չէին. այլ հարիւրաւոր ոսկիների արժողութեամբ զրքեր էին ուղարկում կարօտ դպրոցներին բաժանելու։ Վերոյիշեալ գրքոյկի համաձայն 1900 թ. նպաստ են ստացել մեծ ու փոքր չափով 54, իսկ 1902 թ. 80-ից աւելի դպրոցներ։ Դպրոցական նպաստի գումարը հասել է 10188, 70½ օսմ. լիրայի։ Պատրիարքի հսկողութեան տակ էին և Պոլսոյ թաղական վարժարանները, ուր վարչական այնպիսի կանոնաւորութիւն էր տիրում, որ ուսանողաց դպրոցներում երբէք չէ եղել։ Ազգային խորհուրդը հսկում էր ծրագրի անթերի կատարման վերայ, ուսուցիչներին դասաւանդութեան արտօնագիր էր տալիս, դասագրքեր ընտրում. տարեկան հաշիւ կամ վիճակագրայ կազմում պատրիարքին վերին հսկողութեան տակ։ Իսկ 1908 թուականի սկզբին պատրիարքի ձեռքով խմբագրուել էր և Ազգային խորհրդի քննութեան ենթարկուել «Կազմական Կանոնագիր»-ը, որով միատեսակութիւն էր ստեղծւում դպրոցների կառավարութեան և ծրագրի մէջ։ Սմիրնայի դպրեվանքից դատ, Պէրպէրեան վարժարանի հոգաբարութիւնն էլ պատրիարքն էր յանձն առել հիմնադրի մահուանից յետոյ։ Նոյն իսկ Պէրպէրեանի կենդանութեան ժամանակ երբեք անդամ վակուֆներ հրամայն էր եղած և միայն պատրիարքի երաշխաւորութեամբ էր շարունակուած։ Օրմանեան Սրբազանն էր նոյնպէս, որ հիմնադրի քոյն և հինգ ամեայ յորելեանի դլուխ կանգնեց, հանդանակութիւն արաւ և առաջամանակ, գոնէ, դպրոցը ապահովեց։

Մայրաքաղաքի բարեգործական հաստատութիւններն էլ Ս. Օրմանեանի օրով առանձին խնամք և ուշադրութիւն վայելեցին։ Ս. Փրկչի հուչակաւոր հիւանդանոցը, որ մեր ազգային քաղաքակրթական պարծանքներից մէկն է, *բարեփոխութեան ենթարկուեցաւ* Եւրոպական մտքով։ Հիւանդանոցի մատուռը փոքր էր, հնացած և մեծ հաստատութեան անուան համար չատ անշուք, Կարապետ և Ագաթան Թահթաղրունեանների ծախքով նորից շինեց Ս. Փրկչի եկեղեցին մեծ և վայելուչ

պայծառութեամբ։ Բարեդործ Յակոբեանների առատ նուիրաբերութեամբ հիւանդանոցի մի ամբողջ յարկաբաժին աւելացաւ։ Ուրիշ հնացած երկու հարկաբաժիններ ևս նորոգուեցան Կիւլալենկեանների և Ուենճեանների նպաստներով։ Խորասանճեանների նուիրաբերութեամբ նորոգուեց դեղարանական բաժինը, Գարամանեանի և ուրիշների օժանդակութիւններով նոր սիստեմի անհրաժեշտ մեքենաներ դնուեցաւ։ Նոր յարկաբաժինների բացման օրը պատրիարքը 300 ոսկու չափ գումար հաւաքեց՝ կովեր գնելու՝ հիւանդներին թարմ և մաքուր կաթ մատակարարելու համար։ Հիւանդների խնամատարութիւնն ու բժշկութիւնը կատարւում էր եւրոպական կատարելութեամբ։ Եւրոպացի քոյրեր ընդունուեցան հիւանդանոցի ծառայութեան մէջ, որոնք հսկում էին մաքրութեան և կանոնաւոր հիւանդապատութեան վերայ։ Սրբազան Օրմանեան իւր ընդարձակ կապերով և Պոլսոյ բարձր ու հարուստ դասակարգի մէջ վայելած յարգանքներով առհասարակ շատ օգտակար եղաւ որբանոցների, դպրոցների և բարեգործական հաստատութիւնների համար նուէրներ հաւաքելու գործում։ Ընդարձակեց Ս. Փրկչի հիւանդանոցին մաս համարուած տղայոց և աղջկանց որբանոցները. այս երկու որբանոցների մէջ պատսպարուած էին 300-350 որբեր երկու սեռից։ Ինչպէս դաստաններում, այստեղ ևս ուսման հետ տաներին սովորեցնում էին գործնական արհեստներ՝ փայտի քանդակագործութիւն, թիթեղագործութիւն, հիւսնութիւն, կոշկակարութիւն, դերձակութիւն։

Ը.

Ս. Օրմանեանի դնահատելի ծառայութեան մի կէտն էլ *թափուր վիճակների համար առաջնորդներ*, տեղապահներ և պատրիարքական վոխանորդներ հոգալն էր։ Պատրիարքական աթոռը բարձրանալիս՝ գրեթէ բոլոր վիճակներն անդլուխ էին կամ առանց դասական վարչութիւնների։ Ընդհանրապէս առաքելական եպիսկոպոսներն ու վարդապետները սիրով չեն հեռանում Բոսփորի գեղածիծաղ ափերից։ Այնտեղ կեանքն աւելի դիւրութիւններ և վայելչութիւններ է ընծայում, քան

գաւառական, հետաւոր խուլ անկիւններում։ Բայց 1895/6 թուերի կոտորածներից յետոյ գաւառն աւելի պակաս հրապուրիչ էր դարձել։ Հնչակ չէր կառավարութեան հայամերժ քաղաքականութեան հետ, որ գաւառներում աւելի կոպիտ արտայայտութիւն էր ստանում, հաշտեցնել առաջնորդական-հովուական սրբազան պարտաւորութիւնները։ Տէրութիւնը կասկածանքով էր նայում փոքր ի շատէ աշխուժ և իւր կոչման հաւատարիմ եկեղեցականների վրայ. լրտեսները կենդանի գործունէութիւն էին ցոյց տալիս ոչ միայն մայրաքաղաքում, այլ և գաւառներում, և տարտարղտաբար նոցա մէջ փոքր տակոս չէին կազմում հայերը, իսկ հօտի վիճակը պահանջում էր շտապոյթ նիւթական և բարոյական օգնութիւն։ Մահուան ճիրաններից ճողոպրած ժողովրդին պէտք էր մխիթարել, յոյս ներշնչել, խրախուսել դարձեալ քաղաքակրթական գործունէութեան ճանապարհն ընտրելու, դպրոցներ և արհեստանոցներ բանալու, քանդուած և աւերուած եկեղեցիները նորոգելու, քաղցածին պէտք էր հաց տալ, մերկին հագուստ։ Սորա վերան աւելացնենք, որ օտար՝ կաթոլիկ և բողոքական՝ միսիոնարութիւններից սանք ժողովրդի ծանր կացութիւնից օգտուելով, իրենց նպատակներով քրիստոնէական դիմութեան անապական դինու մէջ պղտոր ջուր էին խառնում Հ. եկեղեցու փարախից իրենց համար նոր հօտեր կազմելու։

Այսպիսի պայմանների մէջ Ս. Օրմանեանին օգնութեան են հասնում նորա աշակերտները, Արմաշական երիտասարդ վարպետները։ Ծանր հարուածների ենթարկուած կեդրոնները, որոնք մնում էին դարձեալ կառավարութեան առանձին հսկողութեան տակ,—Կարին, Վան, Մուշ, Ակն, Արտրկիր և այլն—առաջնորդներ կամ պատրիարքական փոխանորդներ են ստանում, որոնց մէջ կարևոր տեղ են բռնում Արմաշականները։ Ամէն տեղ հնարաւորութեան սահմանների մէջ սկսում է քաղաքակրթական կեանքի վերստանելիքի վերայ վերանորոգչական մի կենդանի գործունէութիւն։ Եկեղեցիներ են նորոգւում, դպրոցներ, արքանոցներ և արհեստանոցներ բացւում, միշտ կեդրոնից նիւթական նպաստ և բարոյական քաջալերութիւն ստանալով։ 1895/6 թուերի կոտորածներին հետևող տա-

ընկերի մէջ Կ. Պոլսոյ հայ թերթերը լիքն են պատասխան եկած այդպիսի տեղեկութիւններով։ Քաղաքակրթական-դպրոցական գործը նորից կեանք է սկսում տասնամեայ, չնայելով ժողովրդի բարոյապէս և նիւթապէս քայքայուած դրութեան և կառավարութեան եռանդուն խոտութեան։ Երիտասարդ վարդապետների անձնուէր ծառայութեան հետ այդ բանի համար պարտական ենք մեծ մասով Ս. Օրմանեանի հմուտ ղեկավարութեան։ Առաջնորդները կիդրոնից հասած հրահանգների համաձայն հոգում են նաև օտար արքանոցներում պատսպարուած որբերի վերայ, որպէսզի նրանք մայրենի եկեղեցուց և ազգութիւնից խլուած չ'կարուին և խորթանան։

Ս. Օրմանեանի պատրիարքութեան օրով երկու դժուար խնդիրներ եւ լուծուեցան, կամ լուծուելու ասպիճանին հասան, որոնք արժանի են յիշատակութեան։ Դրացներից մէկը *Կիլիկիոյ աթոռի համար նոր կաթողիկոս* ընտրելու հարցն էր, որ երկար տարիներ էր տեւել։ Մենք տեսանք արդէն, որ այդ խնդիրը իւր յաջող լուծումն ստացաւ և կառավարութեան յարուցած դժուարութիւնները խուսափուեցան պատրիարքի ջանքերով և աշխատութեամբ։ Երուսաղէմի լուսաբարձեալ տ. Սահակ եպիսկոպոս Խապայեան Կիլիկիոյ կաթողիկոս ընտրուեցաւ և հաստատուեցաւ։ Երկրորդ խնդիրն է *Երուսաղէմի աթոռի շուրջը ծագած դժուարութիւնները*։ Յայտնի է, որ Երուսաղէմի աթոռը երկար տարիներից ի վեր հնձում էր ծանր պարտքերի տակ։ Նորի քանակը մի քանի հարիւր հազար ռուբլու է հասնում, իսկ միտրանութիւնը բաժանուած երկու կուսակցութեան՝ շատ դայթակղելի, փոխադարձ հակառակութիւններ և ամբաստանութիւններ երևան հանեց։ Պատրիարքը ձեր էր, և ինչպէս երևում է անկարող իւր անձնական իշխանութեամբ խաղաղացնելու մտքերը և կարգաւորելու վանքի տնտեսական և բարոյական վիճակը։ Երկու կուսակցութեան թշնամական պայքարը արտայայտութիւն ստացաւ նոյն իսկ տաճարի մէջ ուխտաւորների ներկայութեամբ։ Միտրանութեան մեծագոյն մասի կողմից մեղադրւում էին երեք հոգի՝ տ. Սահակ եպիսկոպոս Խապայեան, երեմիայ տեսուչ տ. Դեսնդ

վարդապետ Մաղուտեան և Երուսաղէմի պատրիարքական փոխանորդը Պոլսում՝ տ. Գէորգ եպիսկոպոս Երիցեան։ Սրանք էլ ի հարկէ իրենց կուսակիցներն ունէին միաբանութեան մէջ։ Բողոքները հասան Պոլիս. Ս. Օրմանեան աշխատեց խաղաղացնել մարդերը, բայց ապարդիւն։ Մի առանձին յանձնաժողով նշանակուեցաւ հաշուական խնդիրը քննելու։ Երուսաղէմի միաբանութեան մէջ բողոքող տարրը յաղթող հանդիսացաւ. տ. Դաւոնդ վարդապետ արձակուեց պաշտօնից և Պոլիս կանչուեցաւ, տ. Գէորգ եպիսկոպոս Երիցեան ազատուեցաւ միաբանութեան անդամութիւնից, իսկ տ. Սահակ եպիսկոպոս Կիլիկիոյ կաթուղիկոս ընտրուեցաւ։ Յանձնաժողովի քննութեան-տեղեկագիրը կեդրոնական վարչութեան կշռադատութեան են թարկուելուց յետոյ՝ դժուար եղաւ դրական վճիռ արձակել, որովհետև յանձնաժողովի անդամներից երկուսը մեղադրում էին Դաւոնդ վարդապետին վանքը պարտքի տակ ձգելու համար, իսկ երկուսը ոչ։ Վարչութեան առաջնորդը՝ Գաբրիել էֆ. Նորատունկեան, թէպէտ համոզուեցաւ վերոյիշեալ վարդապետի մեղաւորութեան մէջ, բայց անհրաժեշտ համարեց մի առանձին պատուիրակութիւն ուղարկել Երուսաղէմ տեղն ու տեղը քննելու հաշիւները և կարգաւորելու վանքի անկերպարան վիճակը։ Այդ գործը յանձնուեց տ. Վահրամ արքեպիսկոպոս Մանկուեանն և արիս էֆ. Թէքճեանի, որոնք իրենց վրայ դրուած պարտաւորութիւնները կատարեցին քննութեան արդիւնքը յայտնեցին կեդրոնական վարչութեան։ Պատրիարքի հրաժարականի պատճառով, անկատար մնաց լուծուելու վախճանին հասած այս կարևոր խնդիրը։ Բայց Ս. Օրմանեանը կատարեց իւր պարտքը վարչութեան հետ խնդիրը պարզելու և մեղաւորը երևան հանելու գործում, թէև, ինչպէս կը տեսնենք, դարանով անձնական թշնամիներ վաստակեց, որոնք կարևոր դեր խաղացին նորան խայտառակելու համար տարբերուած ամօթալի պատմութեան մէջ։

Մեր եկեղեցական նեղբին կեանքի մէջ բարեկարգելի էական կէտերից մէկն էլ երդեցողութեան կանոնաւորութիւն է։ Մեծագործ Գ. Դ. կաթողիկոսը մի քայլ էր արել եկեղեցական

երդեցողութեան միաձայնութեան համար, բայց երաժշտական արուեստ ստեղծելու մեծ գործ կայ կատարելու։ Մինչդեռ Էջմիածնում տ. Կոմիտաս վարդապետի պատրաստակամութիւնը երաժշտական դպրոց կազմելու և իմբասլեանները պատրաստելու մասին անուշադիր թողնուեցաւ Տ. Մկրտիչ կաթողիկոսի օրով, Ս. Օրմանեանը շատ ջանք գործադրեց Եկմալեանի պատարագի արարողութիւնը ընդհանրացնելու Պոլսոյ եկեղեցիների մէջ. կազմել տուեց երդեցիկ խմբեր եկեղեցիների համար, մի տեսակ ընկերութիւններ, երբ բացարձակապէս արգելուած էր ընկերութիւն կազմելը։ Նա խրախուսեց նաև, գրաւոր և բերանացի, հայ երաժշտասլեաններին նոր աշխատութիւններ յօրինելու պատարագի համար և գործադրելու եկեղեցիների մէջ։ Փորձեր եղան դժուարութիւններ յարուցանելու կրթուած պատրիարքի այս գեղեցիկ մտադրութեան դէմ, բայց անյաջող. կրօնական ժողովը մինչև իսկ ընդունեց սկզբունքով երդեհոնի ձայնակցութիւնը, որքան այդ անհրաժեշտ էր ձայների ելևէջները կանոնաւորելու համար։

Ս. Օրմանեանի գործունէութիւնն ամփոփելու համար յիշենք և նորա հովուական գործունէութիւնը իբրև Կ. Պոլսոյ եպիսկոպոս։ Թիւրքիոյ Հայոց պատրիարքը միևնոյն ժամանակ Կ. Պոլսոյ առաջնորդն է։ Նորա բարոյական և նիւթական շինարարութիւնը Ս. Փրկչի հիւանդանոցում տեսանք արդէն։ Բայց նա ուրիշ շինարարութիւններ էլ է արել. նորա յորդորներով Զէնոբ բէյ Մէրամէթճեան շինեց Ծէրիքէոյի եկեղեցին, Սմբատեանի ծախքով և իւր հակողութեամբ նորոգել տուեց մայր եկեղեցին վայել հաշակաւորութեամբ։ Շինուեցան Խասքիւղի վարժարանը Բարաղամեանցի ձեռքով, Ենիգաբուինը Մուրադեանցի, Սամաթիոյ ժամատունը Յակոբեանցի ձեռքով։ Խարխուլ և անհրապոյր տեսքով պատրիարքարանը նոր կերպարանք ստացաւ։ Կառավարութիւնից հրաման էր ստացել և պատրաստւում էր որբանոցի համար ևս մի ընդարձակ շէնք կառուցանելու։ Նա անձամբ էր հսկում Կ. Պոլսի թաղական և կրոնական դպրոցների վերայ, մասնակցում էր քննութիւններին և դպրոցական հանդէսներին. այցելում էր Ս. Փրկչի

հիւանդանոցը, որբանոցները, շատ յաճախ քարոզում էր եկեղեցիների բեմերից։ Նորա քարոզչական եռանդուն գործունէութեան մասին արդէն առաջ էլ յիշեցինք, որ առանց միւս բազմազբաղ գործունէութեան մի լաւ կեանքի բովանդակութիւն կարող էր կազմել։

Նա մասնակցում էր իւր հօտի ուրախութեան և տխրութեան հանդէսներին, խրատելով կամ մխիթարելով դէպքին նայելով։ Այսպիսի կենդանի մասնակցութիւնը հօտի գործերի մէջ, որ ուրիշների համար վատք պիտի վատակէր, նորա վերաբերութեամբ արտասահմանի յեղափոխական հայ թերթերի մէջ դժգոհութեան և բամբասանքի տեղ եղաւ։ Արևելցիներս սովոր ենք մեր բարձր հոգևորականներին փքուած քուրմ տեսնել, փակուած իրենց բնակարաններում։ Այս հասկացողութեան հետ դեր էր կատարում անշուշտ և նորա բռնած ղեղչ դիրքը դէպի յեղափոխութիւնը։ Դժգոհները կային և Պոլսի հայ հոգևորականների մէջ, որոնք նորա մասաւոր բարձրութեան և քարոզչութեան տաղանդի առաջ փոքրիկ դաճաճներ էին, ուստի և անուշադրութեան մատնուած ժողովրդի կողմից։ Բայց Ս. Օրմանեանը ցանկալի էր ժողովրդի համար հանդէսների և յաղաւորութիւնների ժամանակ իւր դիրքի և հանդուրժական տաղանդի համար, իսկ կրթուած դասի մէջ իւր աշխոյժ, բարեկիրթ բնաւորութեան և բազմակողմանի հմտութեան համար։ Եւրոպացի ճանապարհորդներ, բարձրատիճան հոգևորականներ, դիտնականներ միշտ հետաքրքրել են նրանից քաղցր տպաւորութեան տակ։ Շատերից մէկին՝ գերմանացի հայագէտ պրոֆ. Գելցերին յիշենք, որ հիացմունքով է խօսում իւր Ceistliches und Weltliches aus dem türkisch-christlichen Orient. *1900*, Leipzig գրքի մէջ. «Այն ժամանակը, որ ես Նորին երանութեան մօտ եղայի, իմ արևելքում կատարած ճանապարհորդութեան մէջ ամենահետաքրքրական և վայելքով լի ժամերին են պատկանում։ Ես հասկացայ իսկոյն, որ արևելքի նշանաւոր մարդկանցից մէկի և ուղղութիւն տուող անձի հետ գործ ունիմ»։

Աւելացնենք նաև, որ Ս. Օրմանեան այսչափ գործերի մէջ ժամանակ էր գտնում գրական և գիտական աշխատու-

թիւններին համար ևս։ Արմաշի տեսուչ եղած ժամանակ պատրաստել էր արդէն աստուածաբանական այլ և այլ առարկաների դասագրքեր. դոցանից ամենակարևորը *Հայոց եկեղեցւոյ պատմութիւնն էր*, որ պատրիարքութեան ժամանակ ուսելի մշակեց և մի քանի գլուխներ իրրև ամբողջական հատուածներ, ինչպէս Լուսաւորչի և նորա որդոց գործունէութիւնը, Ներսէս մեծ, Սահակ Պարթև, Պահլաւունիք... հրատարակեց «Լումայ» հանդիսի մէջ «Տենասէր» ստորագրութեամբ։ Իսկ այժմ պատրաստում է տպագրութեան համար այդ կարևոր գործի հրատարակութիւնը մի ընդարձակ հատորի մէջ։ Պօլսոյ «Լոյս» և «Արևելք» թերթերի մէջ յօդուածների մի երկար շարք հրատարակեց աւետարանական առակների մեկնութեան վերաբերեալ, որպէսզի քարոզիչներին դիւրութիւն տայ այդ նիւթերի մասին խօսելու։ Դա այն մեծ հատորի առաջին մասն էր, որ նորերս հրատարակեց «Համապատում» վերնագրով։ Կորստից ազատեց տպագրութեան տալով մեր եկեղեցւոյ պատմութեան համար առաջնակարգ նշանակութիւն ունեցող «Գիրք Թղթոց» կոչուած փաստաթղթերի ժողովածուն։ Բարերար գտաւ և մըրցանակներ նշանակեց լաւագոյն քարոզների համար։ Կենդանի մասնակցութիւն էր ցոյց տալիս Ազգային հիւանդանոցի ընդարձակ օրացոյցի կազմութեան, ինչպէս և Իզմիրլեան մրցանակաբաշխութեան առաջարկուելիք և ընտրուելիք նիւթերի քննութեան մէջ։ Այլ ևս նորա գրած բազմաթիւ հովուական թղթերն ու կոնդակները, որ ինքն անձամբ էր շարադրում։

Այս թուցիկ յիշողութիւններն էլ բաւական են անաչառ ընթերցողի համար տեսնելու, որ յանձին Ս. Օրմանեանի պատրիարքական աթոռի վերայ նստած էր *մի կարող եւ վարչական անձնաւորութիւն*։ Մենք ակնարկեցինք այն ծանր ժամանակը, երբ վիճակուած էր նորան զեկավարել ազգի գործերը։ Լրտեսները վխտում էին պատրիարքարանի շուրջը, որոնք Անտոն Բէյոչ Օղլուի զեկավարութեամբ յաճախ ամբաստանում էին կառավարութեան առաջ, թէ պատրիարքն անհաստատամիտ է տէրութեան, կոմիտեների համար փող է հաւաքում. ոչ ոք

չէր համարձակւում ազգային գործերի մէջ փոքր ինչ կենդանի մասնակցութիւն ունենալ, վախենալով բանտից, աքսորից կամ մահուան դատապարտուելուց, լրագիրները ձայն ծպտուն հանել չէին կարող, արգելուած էր ազգ, սահմանադրութիւն, Հայաստան և նման բառեր, նոյն իսկ մի տպագրական տառասխալի համար թերթեր էին փակում. մի խօսքով դամոկլեան սուրը կախուած էր հայ անունը կրող բոլոր հասարակութիւնների և գործիչների գլխին, — մի գործունեայ, խելօք և քաղաքագէտ պատրիարք է մէջ տեղ, որ ամէն տեղ հասնում է հնարաւորութեան չափ և ամէն բանից հասկանում։ Այս հանգամանքներն էին պատճառ, որ վերջին տարիներում պատրիարքի անձնաւորութիւնը այնքան կերպրոնական տեղ էր բռնում ազգային գործերի կառավարութեան մէջ, և ոչ նորա միապետական, հակասահմանադրական ձգտումները, ինչպէս տարածում էին թշնամիները։ Անշուշտ նորա անձնաւորութեան հմայքը, մտաւոր կարողութիւնը, վարչական հմտութիւնը նպաստում էին, որ շրջապատողներն աւելի ենթարկուէին նորա ազդեցութեան։ Բայց այդ առաւելութիւն էր և ոչ պակասութիւն։ «Հանդուցեալ տոքդ. Ստեփան փաշա, ըստ ինձ, գրում է յայտնի խմբագրապետ Բիւզանդ Քէչեանը իւր «Բիւզանդիոն» թերթում, թէ Օրմանեան տասն եպիսկոպոսի կարողութիւն ունէր, և ինքնին կը հաւասարէր բովանդակ վարչութեան»։ Նոյնպէս ազգային վարչութեան առենապետ Գարրիէլ էֆ. Նորատունկեան, նախկին նախագահը ասել է «Մշակի» թղթակից պ. Սարուխանին. «Օրմանեան բարձր էր բոլորից իր հեղինակութեամբ և վարչական հմտութեամբ, և բոլոր շրջապատողները խիստ կերպով կրում էին նորա ազդեցութիւնը»։ «Օրմանեան վերին աստիճանի աշխատասէր մարդ էր. նա յոգնել չգիտէր. Պատրիարքարանի բոլոր գործերին համարեա թէ միայն ինքն էր ուղղութիւն տալիս. ոչ մի գրութիւն դուրս չէր գալիս պատրիարքարանից, մինչև որ նա կանխաւ տեսած և սրբագրած չլինէր։

Ահա Ս. Օրմանեանի գործունէութեան համառօտ նկարագիրը։

Թ.

Պատրիարքի այս խաղաղ ընթացքն ու քաղաքականութիւնը դուրեկան չէր յեղափոխական տարրերի համար։ Սրանք իրենց երկարամեայ գործունէութեամբ առանց խրատուելու միշտ կրկնել են գործելու միևնոյն սխալ եղանակը. այստեղ այնտեղ ողմուկ են հանել մի քանի վինուորներով, կոտորածների և հալածանքների ձևական առիթ տուել կառավարութեան ձեռքը, պատճառաբանելով, թէ առանց արիւն թափելու ազգ չի փրկւում կամ Եւրոպան ուշադրութիւն դարձնում Հայոց վերայ։ Սակայն ով փոքր ինչ հասկացողութիւն ունէր իրական քաղաքականութեան մասին, չէր կարող համակերպուել այսպիսի երևեայական դատողութիւնների հետ։ Եւրոպայից դրական օգնութիւն սպասելը երազ էր, իսկ 1895/6 կոտորածից յետոյ նորից փորձ անել դէնքի ուժով կռուելու մի մեծ պետութեան դէմ՝ բացարձակ խելագարութիւն էր։ Տարաբաղդաբար այս խելագարութիւնը հաւատամք էր դարձեր մերխակ յեղափոխականների համար մինչ այն աստիճան, որ նրանց հակառակ ընթացք բռնողը կամ մտացողը դաւաճան էր նկատւում։ Այսպիսի դաւաճաններից մէկն էր և գլխաւորը Ս. Օրմանեան։ Յեղափոխականների աչքում Ս. Օրմանեանի գործունէութիւնը վնասակար էր, ուստի և նորա դէմ ներքին և աններքին միջոցներով մաքառելը յեղափոխական մի սրբազան գործ։ Այսպիսի սխալ հայեացքի հետևանք էր և այն մահափորձը, որ կատարուեցաւ մի պատանու ձեռքով նոյն խակ եկեղեցւոյ մէջ, 1903 թ. յունուարի 6-ին, պատարագի ժամանակ։

Այս թշնամութիւնն աւելի բորբոքուեց Տ. Մկրտիչ կաթողիկոսի մահուանից յետոյ, երբ Ս. Օրմանեանի անունն էլ շատ յաճախ սկսուեց յիշուել իբրև հայրապետական աթոռի արժանաւոր թեկնածու։ Հնչակեան կուսակցութեան մի խմբակը բացարձակապէս հրատարակեց (Երիտասարդ Հայաստան թ. 39), թէ Օրմանեանը կաթողիկոս ընտրուելու դէպքում, Կովկասեան տարերն անցնել չէ կարող, այսինքն կը սպանուի ճանապարհին։ Մինչև խակ այս մտքով նամակներ գրուեցան այդ կուսակցութեան ներկայացուցիչների ոմանց կողմից։ Ու-

ինքն ապրի լրութիւնը պարտաւոր է հետևել մի քանի անանուն արկածախնդիրների։ Ահա մեր ազատութեան հերոսների գործելու մի նմուշ։ Բայց այս յայտարարութիւնը բաւական չէր։ Ամերիկայում հրատարակուող մի ուրիշ թերթ՝ «Ազգ» անունով՝ իւր էջերում տպեց մի շարք պատկերային յօդուածներ «Փառութեան օճախը» վերնագրով և ապա հրատարակեց առանձին գրքով.— փառերից խաղաս դուրս, արիկայական հայհոյանքների մի ամբողջ կոյտ ընդդէմ Ս. Օրմանեանի և նրան կաթողիկոս ընտրելու դաղափարի, դուռ պորնոգրաֆիայի խակական տեսակը, զարդարուած սաստ դրականութեան պատշաճ ծաղրանկարներով։ Եւ այս ապականութիւնը կարողացաւ իւր ազդեցութիւնն ունենալ Պոլսոյ փողոցային լրագրութեան վերայ, որի ներկայացուցիչը «Մանզումէի էֆքեարն» գրքոյր Ն. Տաղաւարեանն ևս չկամեցաւ յետ մնալ «Փառութեան օճախի» հեղինակից և 1908 թ. յուլիսի 18-ին մի բանախօսութիւն արաւ Գահիրէի Լսարան-Ընթերցատան մէջ կաթողիկոսական հարցի առթիւ, որ և յետոյ հրատարակուեցաւ առանձին գրքոյկով՝ «Հայոց կաթուղիկոսութիւնն և այժմու կաթողիկոսի ընտրութիւնն» վերնագրով։ Նա ոչ միայն օգտուում է «Փառութեան օճախից» Ս. Օրմանեանի գործունէութեան գնահատութեան խնդրում, որ ոչ մի կարգին հեղինակ իրեն թոյլ չտվեր տար, այլ և պատմելով 40,000 պանդուխտների հայրենիք ուղարկելու յայտնի առաստելը, աւելացնում է. «Օրմանեան հաւանականաբար ընել տուած է այդ աքսորին վրէժն հանելու համար յաւուրս Սուլթան Մահմուտի (1828) կ. Պոլսոյ հայ կաթոլիկներու Գաղատիա աքսորման. իր նախնիք այդ աքսորեալներու մէջ գտնուած են, և իրենց ընտանիքն ինչպէս այլ գաղատացիներ եղած են միշտ հայու թշնամի... եր. 30։ Որպիսի անպատուութիւն և ցինիկութիւն, կրթուած և գրական ասպարիզում արդէն յայտնի մի անձնաւորութեան համար։ Դր. Տաղաւարեան իւր այն տետրակով մի պատկերիստ է, որ թուում է Ս. Օրմանեանի մասին մի շարք սուտ ու մուտ տեղեկութիւններ, բայց նորա գործունէութեան և ոչ մի գրական կողմը։ Այսօր տարտարագրաբար գիտենք, որ «Փառութեան օճախի» հեղինակը բարձրագոյն մի հոգևորական է, իսկ «Ար-

ծրունին, որ դարձեալ մի պամփլետ ունի գրած Օրմանեանի մասին Տաղաւարեանին շատ լաւ յայտնի մի անձնաւորութիւն։

Մեր կովկասեան դաշնակցական *շէֆերի* անվայել ճառերն ու հայհոյանքները, որ լսել են հարիւրաւոր մարդիկ Տփխիսում կաթողիկոսական խնդրի շուրջը եղած խորհրդածութիւնների ժամանակ 1909 թ. աւելորդ ենք համարում ամփոփել այստեղ։

Պատրիարքի դէմ դժգոհները կային և *ժողովրդական տարրերից*, որոնք նեղուել էին կառավարութիւնից և պատրիարքի միջնորդութեան դիմել, բայց նա հնարաւորութիւն չէր ունեցել օգնել նրանց։ Եթէ կառավարութեան յարաբերութիւնը հայ ազգի հետ լինէր բնական, եթէ հալածանքի և անարդարութեան սկզբունքը աւաջնորդող եղակէտ չլինէր կառավարութեան համար, անշուշտ չնչին խնդիրներով ամիսուած չէին լինել պատրիարքարան դիմել։ Պատրիարքը պէտք է ազգային ընդհանուր գործերը ղեկավարէր. ուղղութիւն տար ներսը և պաշտպանէր կառավարութեան անարդար ոտնձգութիւնների դէմ, այն ինչ նորա դուռն էին բաղխում շատ չնչին, անձնական և անհատական խնդիրներով, որոնք հետևանք էին կառավարութեան հայամերժ և հալածող քաղաքականութեան։ Շատերին պատրիարքը գոհացնել չէր կարողանում, շատերին հարկադրուած էր մերժել, և ահա այս հանգամանքները դժգոհութեան ատիթ էին տուեղծում, որպէս թէ Պատրիարքն ուշք չի դարձնում կամ ինչպէս թշնամիները էին տարածում «սիրտ չունի» ժողովրդի համար։ Ընդհանուր առմամբ ես ազգային խնդիրների մէջ պատրիարքարանը չէ կարողանում այն արդիւնքը ցոյց տալ, որ ապասելի էր այնպիսի մի կարող անձնաւորութիւնից, որպիսին Ս. Օրմանեանն էր։ Բայց խղճից կամ հանգամանքները կշռադատելու ընդունակութիւնից զուրկ մարդիկ միայն կարող են մեղադրել պատրիարքին. որովհետև այդ բոլորը հետևանք էր ոչ թէ պատրիարքի անձնական յատկութիւնների, ծուլութեան կամ անտարբերութեան, այլ կառավարութեան սիստեմատիկ, դիտակցական հալածանքի։ Չլինէր պատրիարքական աթոռի վերայ նստած Ս. Օրմանեանի

նման մի խելօք և քաղաքագէտ անձնաւորութիւն, տաճկահայոց վիճակը կը լինէր շատ աւելի վատթար։ Բայց նորա քաղաքական հակառակորդներն ու անձնական թշնամիներն օգտուում էին այս հանգամանքներից նրան վարկաբեկ անելու համար։

Ս. Օրմանեանի հակառակորդ մի երրորդ տարրը Բիւզանդ Բէշկանի և ուրիշների վկայութեամբ սրբազան Երիցեանի եւ Ղեւոնդ վարդապետ Մազուտեանի կողմնակիցներն էին։ Մենք տեսանք, որ Երուսաղէմի պարտուց խնդրում նորա մեղադրում էին դրամական մեծ գումարների վերաբերմանց մէջ։ Դոցանից յատկապէս Ղեւոնդ վարդապետ Վահրամ արքեպիսկոպոս Մանկունու կարծիքով անպայման մեղաւոր է դրամական անհաւատարմութեան մէջ։ Ս. Օրմանեանը քննութիւն նշանակելով՝ իւր պարտքն էր կատարել, բայց դորանով էլ անձնական թշնամիներ վաստակել։ Այդ երկու անձնաւորութիւնները դրամի զօրութեամբ և ուրիշ կառավարական միջոցներով քիչ դժուարութիւններ չեն յարուցել պատրիարքի դէմ և գլխացաւանք պատճառել նորան։ Յուլիսի 11-ի յեղափոխութեամբ և պատրիարքի հրաժարականով նրանք աւելի միջոց և յարմարութիւն գտան իրենց վրէժը լուծելու, փողոցային ցոյցերի մէջ կարևոր դեր են կատարել այս երկու եկեղեցականներն իրենց կողմնակիցներով։ (Բիւզանդիոն թիւ 3610)։

Մի կարևոր խնդիր ևս պէտք է ի նկատի ունենալ Ս. Օրմանեանի դէմ կատարուած դէպքերը հասկանալու համար։ Երիտասարդ Թիւրքերն իրենց յեղաշրջումը յաջողցնելու և ապահովելու համար աշխատել են տիսլել միանալու յոյն, սերբ և բուլգար մետրապոլիտներին և եպիսկոպոսներին։ Այս մասին վկայում է Միլիւկով իւր «РѢЧЬ» լրագրին ուղարկած թղթակցութիւններով։ Նրանց նպատակն էր ներքին համերաշխութեան խնդրից զատ, ցոյց տալ Եվրոպին, թէ բոլոր հպատակներն անխտիր ապատամբել են պետութեան դէմ, որպէսզի Սուլթանին ստրապահար անեն և գինաթափ։ Կ. Պոլիս մտնելուց յետ

տոյ իրենց հետ կը կամենային միացած տեսնել այստեղի ազգերին և նրանց ներկայացուցիչներին։ Սկզբում հպատակ ազգերը չատ անտարբեր վերաբերուեցան, թափորներն ու հանդէսները յետոյ միայն սարքուեցան երիտասարդ Թիւրքերի ցանկութեան համաձայն։ Բնական է, որ չատ աւելի զգոյշ պիտի լինէին հպատակ հասարակութիւնների հոգևոր պետերն ու ներկայացուցիչները և իրենց հետու պահէին առաջին օրերի ցոյցերից։ Ի՞նչ կը լինէր հետևանքը, եթէ կառավարութիւնը հասկանար երիտասարդ Թուրքերի Թուլութիւնը ընդդիմութիւն սկսէր և յաղթող հանդիսանար։ Փողոցի Թեթեւսոլիկ հերոսը այդ մասին մտածելու պարտքն ու գիտակցութիւնը չունէր, բայց ամբողջ Թիւրքիոյ հայոց պատրիարքը պէտք է մտածէր։ Ս. Օրմանեան և նրա հետ էլ յունաց պատրիարքը։ միւս հոգևոր պետերը բնականաբար սպասողական դիրք պէտք է բռնէին մինչև կայսերական հրովարտակի հրատարակութիւնը։ Յուլիսի 11-ին միայն լուր էր տպուած Թերթերի մէջ սահմանադրութեան հաստատութեան մասին, հրովարտակը լոյս տեսաւ մի քանի օր յետոյ։ Ս. Օրմանեանի բռնած այս սպասողական դիրքը դուրեկան չէր երիտասարդ Թիւրքերի համար. նրա ամենից աւելի մեծ աջակցութիւն սպասում էին հայերից. մեր Թեթեւսոլիկները տհաճութեան այդ զգացմունքը մեղմացնելու համար դիմեցին յուլիսի 16-ի և 25-ի աննկերգի ցոյցերին, իսկ Թշնամիները հրատարակեցին նրան որպէս նոր սահմանադրութեան հակառակորդ։ Այս բոլոր հանգամանքները պէտք է ի նկատի ունենալ Ս. Օրմանեանի հրաժարականի հետ կապուած դէպքերը հասկանալու համար։

Ժ.

Յուլիսի 16-ին պատրիարքը Խատը ժողով է գումարում «գոհաբանական մաղթանք» կատարելու և հանդէսներին պաշտօնապէս մասնակցելու համար որոշում անելու։ Բայց այդ ժամանակ խուժանի գլուխն անցած երեք տխրահռչակ էֆէնդիներ՝ Սաւտիս Սուրէնեան, Արիստակէս Գասպարեան և Խրնդիր Սիմօնեան շրջապատում են Ղալաթիոյ խորհրդարանը է

«յանուն ազգի» պահանջում խառը ժողովից պատրիարքին հրաժարեցնել։ Ազգային վարչութեան ատենապետ Գաբրիել էֆէնդի Նորատունկեան փորձում է համոզել խուժանապետներին, թէ խառը ժողովը պատրիարք հրաժարեցնելու իրաւունք չունի. ի վերջոյ յայտնում է նաև, թէ պատրիարքը արդէն հրաժարական է տուել։ Բայց ի զուր։ Ներսէս պատրիարքի ազգային ժողովի մէջ «յիմար» կոչուած Սուրէնեանը չէ բաւականանում այդ հրաժարականով. «Ազգը կուզէ, որ Օրմանեան պաշտօնանկ ըլլայ և ոչ թէ հրաժարական տայ»։ Սակայն ազգի անունով խօսող այս խուժանապետը ոչ այլ ոք էր, բայց եթէ պատրիարքին, վարչութեան եւ ազգային ժողովին տանիկ կառավարութեանը մատնելու համար 1891 թ. յունիսի 28-ին երեւփոխանութիւնից արտաքսուած մի անձնաւորութիւն։ Նա այլ ևս իւր այդ տխուր գործունութեանն համար խոսում պիտի զրկուէր ազգային վարչութեան շրջանների մէջ որև է պաշտօն ստանալուց ինչպէս և հեռու էր պահուած նաև Ս. Օրմանեանի պատրիարքութեան ընթացքում։

Պատրիարքի հրաժարականից յետոյ, որ հետանք էր վրատանդի բոլէին ազգային վարչութեան վախկոտ և վարանոտ գիրքին և ոչ խուժանի ցոյցերի, թշնամական գործունութիւններն ուելի զօրեղացան նորա դէմ։ Լուր են տարածում, թէ Ս. Օրմանեանը ազգային անդուկից 30,000 ոսկի է իւրացրել և կամենում է Ռուսաստան փախչել։ Տարածւում և տարածւում է ժողովրդի մէջ մի կեղծ հեռագիր, որպէս թէ Ելուսաղէմից Ս. Իգմիրլեանի կողմից խփուած, որով յորդորում է ժողովրդին հաշիւ պահանջել հրաժարուած պատրիարքից և չսպասել, որ նա վախչի։ Նոյն մտքով ոմն Բրէեան, հայերէն և թուրքերէն լեզուներով յայտարարութիւններ է տալիս և գրգռում ժողովրդին, իսկ երբ ս. Իգմիրլեան սպասւում է դատ բանալ նորա դէմ այդ կեղծիքի համար, համարձակութիւն է ունենում յայտնելու, թէ բարի դիտաւորութեամբ է այդ կեղծիքը կատարել։ Ժողովրդի մէջ տարածում են «հրէայ լակոտների» ձեռքով մեծ քանակութեամբ ծաղրանկարներ Ս. Օրմանեանի

մասին։ Սրանցից ոչ պակաս անբարոյական և դատապարտելի վարմունք ցույց տուին Պոլսոյ հայ թերթերից ոմանք, լայն բանալով իրենց էջերը հակաօրմանեանական աղտեղի յոդուածներով։ Այս բոլորի հետևանքն ու պսակն էր յուլիսի 25-ի խայտառակ դեպքը, որ յաւիտենական արատ պիտի մնայ այդ օրերի պատմութեան մէջ։ Ամբոխը «որ դժբաղդաբար ատելին դատակարգէ և նախկին բէժիմի կուսակիցներէ և կամ տիրահակ անձերէ կը բաղկանար» (Բիւզ. 3598), շրջապատում է պատրիարքի մասնաւոր բնակարանը, գոռում-գոչումով պահանջում, որ Ս. Օրմանեանին տանեն և բանտարկեն պատրիարքարանում, որպէս զի չվախչէ։ Բերում է մի վակ կառք, նրան նստեցնում են մէջը և հետն էլ ոստիկանապետն ու նորա օգնականը և խայտառակութեան թափոր կազմելով, տանում են այսպիսով Պերայի և Գալաթիայի միջով Գում-Կափուի Հայոց պատրիարքարանը։ «Ամեն կողմից թափւում են կառքի վերայ հասարակ դատակարգին պատկանող զանազան մարդիկ, գրում է «Մշակի» մէջ (վ. 168, 1908 թ.), ականատես պ. Սարուխանը, մէկը բարձրանում է կառքի վրայ, միւսը հետը, երրորդը մի պատուհանից է կառչում, չորրորդը միւս պատուհանից և բուռունցքները ուղղում պատուհաններից ներս դէպի նրան»...։ Ավասայ յիշում ես 1900 տարի առաջ մի ուրիշ խուժանի դատաստանը Աստուծոյ Արդարի դէմին...։

Բայց թիւրք կոմիտէն տեսնում է, որ հայերի լրութիւնը չափ ու սահմանից անցաւ. միջամտում է գործին, և երբ տեղեկանում է Ս. Օրմանեանը ոչ փախչելու միտք ունի և ոչ զլանում է անմիջապէս հաշիւ տալ, իւր պաշտպանութեան ներքոյ է յանում տարատարտ անարգուած պատրիարքին, բարոյական ապտակ հասցնելով հայ հասարակութեան երեսին։ Նորան այն գիշեր վերադարձնում են իւր բնակարանը, յանձնելով ոստիկանապետի անմիջական հսկողութեան. ամբոխն էլ իւր կողմից պահապաններ է նշանակում, երկուսը Ս. Օրմանեանի կացարանում, իսկ մէկը դրանը։ Ապատութեան առաջին օրերը հայ հասարակութիւնը լաւագոյն ապացոյցը տուաւ, թէ սարկութեան մէջ անուած սերունդը չէ կարող ապնիւ և բարեկիրթ զգացումներ ունենալ։ Ստոր հասարակութիւններն ու

թերթերը դատապարտեցին հայ հերոսների արարմունքը. Օսմանեան միութեան և Ցառաջադիմութեան ընկերութիւնը պատուիրակութիւն ուղարկեց հայ խմբագրատները «և բողոքեց երկկուան ոգեղ և ապօրէն ցոյցին դէմ», յայտնում է «Բիւզանդիոնը»։ Բայց ամօթի և պատկառանքի զգացմունքը, ինչպէս երևում է դին չունէր այդ օրերում մերոնց մէջ։ «Մանկումէջ էֆքեար» ոչ միայն չզդաստացաւ, այլ իւր էջերը լայն բաց արաւ Ս. Օրմանեանի դէմ գրած լկտի յօդուածների համար, ինքն իւր կողմից անվայել և վիրոցային ածականներ թափելով հրաժարուած և անպաշտպան պատրիարքի գլխին։ Նրա օրինակից վարակուեց և «Արևելքը», որ սկզբում տատանւում էր, բայց յետոյ տիրող հոսանքից վախենալով, չկամեցաւ յետ մնալ «Մանկումէջից»։ Միայն «Բիւզանդիոնն» էր, որ իւր խմբագրապետ Բիւզանդ Բէշչեանի ընդանով դատապարտեց և անպատշաճ համարեց պատրիարքի դէմ սարքուած դուռնիկ ցոյցերը, թէև սա էլ ժամանակին հարկը վճարեց և չշարունակեց իւր արդար պաշտպանութիւնը։

Շատ խրատական է ուսումնասիրել ազատութեան առաջին օրերին Պոլսոյ հայ մտաւորականների և թերթերի բռնած դիրքը։ Մի կողմից նկատւում է անտեղի և չափազանցութեան հասցրած շողոքորթութիւնների տարափը Սուլթան-Համիդի և երիտասարդ Թիւրքերի հասցէին, միւս կողմից անարդական, և անպատկառ վերաբերմունք դէպի անպաշտպան և վշտահար պատրիարքը։ Արժանապատուութեան զգացմունքը պէտք է մարդու մէջ մնում լինի, որպէս զի ընդունակ լինի այնպիսի ներբողական խօսքեր ուղղել Սուլթան Համիդի հասցէին, որ մի ամբողջ ազգ սրի քաշել տուաւ և շարունակեց դարձեալ իւր հալածանքները անողոք կերպով մինչև վերջ։ «Դրօշակը» (№ 7) իրաւունք ունէր նկատելու. «Դա «Փոլիթիկա» չէ, այլ պարզապէս ստորաքարշութիւն», «ստրկամտութեան նոր ու այլանդակ ցոյցերը»։ Բայց միևնոյն հերոսները հայոց բառարաններից հայհոյութեան ոչ մի բառ բաց չթողին հրաժարուած պատրիարքին անպատուելու համար, դիմելով յաճախ կեղծիքի և ցինիկութեան։ Մենք միայն երկու նմուշ կաւելացնենք մինչև այժմ յիշածների վերայ նրանց որակելու համար։

«Մանկումէի էֆէնտի» թ. 2177 «Օրմանեան կուզէ իւր նախկին վարախը վերանոր նալ» վերնագրի տակ այսպիսի լուր է հաղորդում. «Զրոյց կը շրջի, թէ Օրմանեան նախկին և ապագայ դերասայծառը փափաք յայտներ է կրկին կաթոլիկներուն վերադառնալու»... ահա հակառակորդների գործադրած միջոցներից մէկը։ Եւ այս միտքը արտայայտուած է նախ «Փոութեան օճախ» կեղտոտ գրքոյկի մէջ, էջ, 111—112 իբրև ենթադրութիւն ապագայի համար։ Սրիկայութեան և թերթեամտութեան մի ուրիշ շատ բնորոշ դէպք յայտնեցին Պոլսոյ բոլոր թերթերը. ահա այդ դէպքի նկարագրութիւնն ըստ «Արևելքի» թ. 5855. «Եռաձայնին դէմ ցոյց.. «Կիրակի օր Ղալաթիոյ եկեղեցին մէջ արտասովոր դէպք մը պատահեցաւ պատարագի միջոցին։ Երբ «խորհուրդ խորին»-ը պիտի սկըսուէր, երկու երիտասարդներ եկեղեցիին պահարանը երթալով երաժշտական Զիլինկարեան էֆէնտին փնտուեցին։ Զիլինկարեան էֆէնտին դուրս եկաւ. յիշեալ երկու անձերը՝ խարազանը ձեռքերնին սպառնացան, ըսելով. «պէտք չէ եռաձայն ըլլայ Օրմանեանին սիստէմն է ատ. ապա թէ ոչ տակն ու վրա կընենք հոս»։

Մեկնութիւններն աւելորդ են. այս ամբողջ պատմութեան մէջ պատկերը, կեղծիքը, զրպարտութիւնը, երեխայական թերեամտութիւնն ու սրիկայութիւնը, անձնական ատոր վրէժխնդրութեան զգացմունքը դաշնակցութիւն են կազմել Ս. Օրմանեանին վարկաբեկ անելու և կաթողիկոսական ընտրելիութեան ցուցակից հանելու նպատակով։

ԺԱ

Մենք տարի են ունեցել հետևելու Պոլսոյ, Բուլգարիոյ, Ամերիկայի հայ թերթերին։ Դոցանից ոմանց մէջ շատ ցեր ու կեղտ է եղել Ս. Օրմանեանի դէմ ուղղուած յօդուածներում, բայց շատ քիչ դրական փաստեր նորա գործունէութիւնը վնասակար ցոյց տալու համար։ Պատրիարքին մեղադրել են, թէ նա հայոց դատը չէ պաշտպանել, չէ բողոքել կառավարու-

թիան դէմ ճնշումների և հալածանքների համար կամ չէ հրաժարուել բողոքն անուշադիր մնալու ժամանակ, ազգային սահմանադրութիւնը թաղել է... այս խնդիրների պատասխան մեր ընթերցողներն արդէն ստացան որոշ չափով։ Այդ մեղադրանքները կամ չափազանցութիւններ են եղել կամ անիրագործելի անցեալ պայմաններում։ Պատրիարքի կամ խառը ժողովի անդամների վերջնական հրաժարականը միայն վնաս կը բերէր և ոչ օգուտ։ Հրաժարուող անդամների փոխարէն տէրութիւնը իւր ցանկացած մարդիկը կարող էր մտցնել, իսկ պատրիարքի փոխարէն չկիսեմ ով պիտի կարողանար ուելի խելօք կատարել տիրող ծանր պայմանների մէջ։ Պատրիարքին մեղադրել են դրամական գործունեայ մէջ, որ կատարեալ զրպարտութիւն է։ Մենք տեսանք, թէ ինչ աղբիւրներից է ծագում այդ։ Պատրիարքը առաջին օրուանից իսկ պատրաստակամութիւն էր յայտնել հաշիւ տալ, իսկ Բիւզանդ Բէյչեանի վկայութեամբ նորա հաշիւները պահուած են կանոնաւոր և անթերի. հայազգի մեծատուն վաճառականներ և պատուաւոր անձինք տուիչ են ունեցել տեսնելու և գնահատելու նրա հաշուէմատեանները։ Եթէ տարբերական ընդհանուր քննութեան չեն ենթարկուել և յայտարարուել թերթերում, պատճառը քաղաքական բացառիկ պայմաններն են եղել։ Ս. Օրմանեանն արդէն իւր մօտ եղած բոլոր գումարներն ինքնաբերաբար յանձնել էր տեղապահ Եշիլ Դուբեան սրբազանին, իւր հրաժարականից յետոյ՝ պաշտօնական թղթերով։ Բայց ոչ մի սրբութիւն չունեցող և ամենավատթար միջոցներից չքաշուող նորա թշնամիները չարունակեցին պղտորել հայութեան միտքը, թէ նա դրամական գործունեայ է կատարել, այն էլ մեծ չափով։ Նրանց բերանը փակելու լաւագոյն միջոցը եղաւ «Նպաստից Յանձնաժողով. Հաշուեցուցակ եւ տեղեկագիր, 1897—1908» տետրակը, ուր Ս. Օրմանեան մանրամասն հաշիւ է ներկայացնում իւր պատրիարքութեան ընթացքում որբերի և կարօտեալների համար ստացած գումարների և նոցա խելացի գործադրութեան մասին։ Այդ տետրակը միևնոյն ժամանակ լաւագոյն ապացոյցն է հեղինակի անսահման եռանդի և գործերի մէջ ցոյց տուած անմիջական, կենդանի մասնակցութեան։

Նախորդ պատրիարքին մեղադրել են և նեպոտականութեան՝ իւր ազգականներին և մերձաւորներին հովանաւորելու մէջ։ Դորա համար փաստ է յիշուել, որ նորա փեսան պաշտօն է ստացել վանականական մի դրամներակում, դուցէ պատրիարքի միջնորդութեամբ, կամ հղրայրը պալատական բժիշկ է դարձել։ Ազգային շրջանների մէջ որպէս դրական փաստեր յիշուում են երկու դէպք՝ ա) Տիգրան Տ. Ներսէսեանի և երկրորդը Տ. Բարգէն վարդապետի (այժմ եպիսկոպոս) վերաբերութեամբ։ Տեր-Ներսէսեանը Ս. Օրմանեանի փեսայի հղրայրն է. նորա պատրիարքութիւնից առաջ արդէն քաղաքական ժողովի անդամ էր և տարադրելոց յանձնաժողովի նախագահ։ Այդ մարդը մեղադրւում էր որպէս կաշառակեր և տարադրելոց սնդուկից 3000 (!!) ոսկի չափ իւրացնող (տ. Փաւթեան օճախ եր. 12—14 և Տաղաւարեանի բանախօսութիւնը (եր. 33)։ Շատ կասկածելի է, մանաւանդ տղրիւրների անվստահելիութիւնը նկատելով։ այդպիսի մի մեծ դումարի (մօտ 30,000 ր.) իւրացման ճշտութիւնն, բայց հաւանօրէն մաքուր չէ եղել նաև *պատրիարքը արձակել է նրան պաշտօնից։* Երկրորդ փաստը Մշոյ նախկին առաջնորդ տ. Բարգէն վարդապետի որբերի սնդուկից 160 ոսկի իւրացման սուտ պատմութիւնն է։ Հայրապետանական պատգամաւորները (Փաւթեան օճախ եր. 57 և Տաղաւ. բան. եր. 33) և թերթերը այս պատմութիւնը հոլովել են բոլոր հայհոյական բառերով, պատրիարքին մեղադրելով իբրև իւր աշակերտի և հաւատարմի դողութեան պաշտպանի, իսկ երիտասարդ գիտնական Բարգէն վարդապետին իբրև որբերի հացը իւրացնողի։ Մինչև իսկ ծաղրանկարներ կան այս խնդրի հետ կապուած։ Պոլսոյ թերթերից յատկապէս իւր ցածութեամբ փայլող «Մանկումէջ Էֆքեարը» այնպիսի աղմուկ հանեց և այնպիսի ստոր խօսքերով վարկաբեկ արաւ խեղճ վարդապետին, որ վերջինս ստիպուեցաւ թողնել իւր տեսչական պաշտօնը Արմաշում և դալ Պոլիս։ Նա դիմեց պատրիարքարանի արդար պաշտպանութեան Եղիշէ Ս. Դուրեանի օրով, վկաներով և փաստերով հերքեց և ցեխեց զրպարտների բերանը և ստիպեց լեզուները փոխել կամ լռել։ Նոյն իսկ Բուլգարիայ «Ռալմիկը», դաշնակցական մի թերթ, իւր կողմից վկայեց, որ

Մշոյ նախկին առաջնորդը շատ օգտակար գործունէութիւն է ցոյց տուել Սասնոյ և Մշոյ արկածեալներին և թէ նրա դէմ եղած բամբասանքները զրպարտութիւններ են։

Ս. Օրմանեանին մեղադրել են նոյն իսկ չնչին խնդիրների համար, դռնապանի կոպիտ վարմունքը կամ խօսքը խընդրատու մի կնոջ կամ մարդու դէմ, գրագրի իրական, թէ յերևակայած կաշառակերութիւնը, նոյն իսկ սրբազանի ժպտուն դէմքը, սիրալիրութիւնն ու բարեկիրթ խօսակցութիւնը մեղք է համարուել և ասւիթ, որ նորան անսիրտ հրատարակին և չափազանց դունաւորուած յօդուածներով ընդհանուր զայրոյթ ու դժգոհութիւն յարուցանեն։

ԺԲ.

Ռուսահայոց որոշ շրջաններում շատ շրջութեամբ էին խօսում մի ժամանակ Ս. Օրմանեանի կաթողիկոսական թեկնածութեան մասին։ Խուժանի արարմունքը տարաբաղդաբար իւր ազդեցութիւնն ունեցաւ. Ս. Օրմանեանի բարեմասնութիւններին և Հ. եկեղեցւոյ բարիքներին քաջ ծանօթ անձանց աչքում այդ խնդիրը ոչ մի փոփոխութիւն չէ կրել, բայց չենք կարող այդ ասել ընդհանրապէս։ Նոյն իսկ «Մշակի» խմբագիրներից մէկը մի քանի անգամ կրկնել է, թէ Կ. Պոլսոյ դէպքերից յետոյ անկարելի է պաշտպանել Ս. Օրմանեանի թեկնածութիւնը։ Սակայն այս դատողութիւնը ոչ միայն հիմնաւոր չէ, այլ և պարտաւորեալ է։ Ս. Օրմանեանի անձնական արժանաւորութիւնը հասկացողների աչքում ոչնչով չէ պակասում, որ փողոցային մարդիկ միջոցների մէջ խտրութիւն չդրին իրենց նպատակին հասնելու համար։ Կրկնում ենք, թոյլ պիտի տանք, որ փողոցը լինի մեր ազգային գործերին ուղղութիւն տուողը։ Պատուաբեր չի լինիլ մեզ համար, եթէ նորից կրկնենք այն սխալները։ Անհրաժեշտ է հետզհետէ հող պատրաստել և ազգային-եկեղեցական ընդհանուր ժողով դումարել, քայքայման վիճակին հասած մեր դարաւոր ազգային ժառանգութեան կրօնական վերակենդանութեան, վարչական եւ ծխական բարեփոխութեան խնդիրները լուծել, բա-

ական ութիւն տալ ժամանակի հասունացած և խելացի պահանջներին, աւելի սերտ յարաբերութիւն և միութիւն մշակել եկեղեցւոյ լրութեան մէջ։ Պէտք է միջոցներ ձեռք առնել ժամանակի համաձայն մտաւոր եւ բարոյական բարձր մակերեսութով եկեղեցականութիւն պատրաստել եւ նիւթապէս ապահովել, գիտական և կրթուած միաբանութիւն ստեղծել, կարգաւորել եւրոպական մոտով Մ. Աթոռի թանգարանն ու մատենադարանը, գիւրութիւններ ստեղծել գիտութեամբ զբաղուելու վանքերի առաջ քաղաքակրթական բարձր նպատակ դնել, ճեմարանը և միւս հաստատութիւններն իրենց անկերպարան և անապահով վիճակից հանել, կալուածների և դպրոցների կառավարութեան և բարեկարգութեան աւելի խելացի և հաստատուն ձև մշակել։ Եկեղեցական արուեստը՝ ճարտարապետութիւնը, նկարչութիւնը, յատկապէս երաժշտութիւնը կարող են աւելի հոգատարութեան և խնամատարութեան։ Մեր եկեղեցական կեանքի նեղրին բովանդակութիւնը ու քաղաքակրթական ստեղծական կարողութիւնը ոչ բաւական է կամ անվերջութեան ենթարկուել, մենք չունենք քրիստոնէական-եկեղեցական բարեգործական հաստատութիւններ՝ հիւանդանոց, անկելանոց և որբանոց. չունինք ոչ բարոյական կանոնաւոր խնամատարութիւն, հովութիւն? կամ հոգեշահական գործունէութիւն, համայնական կամ ծիսական կազմակերպութիւն։ Բարոյական գործը նոյնպէս մոռնուած է ամբողջութեան և մեր առաջնորդները հոգեոր կեանքի ղեկավարներ չեն. կրօնական-բարոյական կեանքին ուղղութիւն տուող, այլ գիտական պաշտօնեաներ։ Այս բոլոր խնդիրների յաջող լուծումն ու կանոնաւորումը մեծ կամ փոքր չափով կախուած է կաթողիկոսի անձնաւորութիւնից։ Նախընթաց քայքայուող շրջանը եթէ չարունակուի և այժմ, փոխանակ վերակազմող և բարեկարգող ստեղծական գործունէութեան՝ մեր եկեղեցւոյ ապագան մեծ վտանգի կենթարկուի. Պէտք է ընտրել մի անձնաւորութիւն, որ նոր կենդանարար հոսանք ստեղծել կարողանայ և մեր ժողովրդի հոգեոր-բարոյական-քաղաքակրթական վերածնութեանը նպաստէ։

Մեր խղճի եւ գիտակցութեան թելադրութեամբ այդպիսի անձնաւորութիւններից մէկն է Ս. Օրմանեան,

գիտուն, քաղաքագէտ, լեզուագէտ, փորձառու, մեր եկեղեցւոյ անցեալին եւ ներկայ պահանջներին բաջ ծանօթ եւ գործունէութեան անսահման եռանդով լցուած։

Հակառակորդների գործադրած մեքենայութիւններն ու միջոցները իրենց հետեւանքներն ունեցան. ժողովրդի միտքը չփոթուած էր յերիւրուած բազմաթիւ աւասալական պատմութիւններով և զրպարտութիւններով։ Տաճկահայոց մտքերի վերայ սահմանադրութեան հրատարակութեան առաջին տարին կատարելապէս իշխում էին նախկին յեղափոխականները, իսկ Օրմանեանը համարուած էր նրանց մահացու թշնամին. Անկախ անձնաւորութիւններն իսկ հնարաւորութիւն չունէին իրենց համոզումը պաշտպանելու. ընդհակառակ հանդէս էին եկել «ալրդտոր ջրում ջուկ որսացողներ», որոնք ձգտում էին նոր կուրսի ժամանակ իրենց համար տեղ ու դիրք ստեղծել։ Այդ նպատակին հասնելու լաւագոյն միջոցներից մէկը Ս. Օրմանեանին հակառակորդ երևալ կամ նրան վարկաբեկ անելու մտքին գործիք դառնալն էր։ Այս խնդիրը շատ պարզ կերպով երևան եկաւ 1908 թ. կաթողիկոսական ընտրութեան ժամանակ։ Պատգամաւորներից ոմանք խոստովանում էին Ս. Օրմանեանի արժանաւորութիւնները, բայց անկարող էին զգում իրենց պաշտպանել նորա դասը, իսկ բարոյական սկզբունքներից զուրկ և տեղ ու դիրքի ձգտող անձնաւորութիւններ, առանձին դասում էին և խոստովանում նորա հանճարեղութիւնն ու վարչագիտութիւնը, հրապարակային ժողովներում հակառակը խօսում։ Հակառակորդները հասած էին իրենց նպատակին և Ս. Օրմանեան քառանուն ցանկի մէջ մտած չէր։

Բայց այդ բաւական չէր. պէտք էր ուրիշ ճանապարհով չարունակել վարկաբեկելու գործողութիւնը։ Այլևս գրամական գնդումների կամ անհաւատարմութեան մէջ մեղադրել չէին կարող, երբ հրատարակուած էր ստացուած գումարների և գործադրութեան մանրամասն հաշիւները։ Այս խնդրում ստիպուած էին լեզուները փորը քաշել. բայց դժուար չէր ուրիշ տեսակ գնդումների մէջ մեղադրել։ որոնց լուսաբանութիւնը ժամանակ ու աշխատանք էր պահանջում։ Ազգային ժողովը 1908 թ. դեկտ. 12-ի և 19-ի նիստերի մէջ մի «Բնիչ Յանձ-

նաժողով» ընտրեց ամբաստանիչների թղթերը ստուգելու և արդարութիւնը որոշելու համար։ Երկու տարուայ ձգձգումներից յետոյ, վերջապէս, Յանձնաժողովը իւր քննութեան արդիւնքը ներկայացրեց Ազգային Ժողովին, որ հրատարակուած է այժմ պաշտօնապէս։ Մեր ներքին կեանքի պատմութեան մի տխուր էջ է այդ «Տեղեկագիր»-ը որ ցոյց է տալիս, թէ որչափ ցած, բարոյապէս ընկած տարրեր կան մեր հասարակութեան մէջ։ Բանից երևում է, որ ամբաստանութիւնների մեծագոյն մասը զուտ զրպարտութիւն է կամ փաստերի խեղաթիւրում։ Ամբաստանողները երբեմն չփոթում են դէպքերն ու թուականները և Ս. Օրմանեանցին մեղադրում այնպիսի խնդիրների մէջ, որ նորա նախորդների ժամանակ են տեղի ունեցել։ Մենք չենք կամենում վերլուծել «Տեղեկագրի» բովանդակութիւնը, ոչ կամենում է հետամուտ լինել ճշմարտութեան, թող կարդայ Ս. Չէրքէզեանի «Օրմանեանը զրպարտութեան ցանցերում» գրքոյկը։

Սակայն գործքն է ընորոշում մարդուն և ոչ նորա անուան չուրջը կապուած զրպարտութիւնները. Մինչդեռ Ս. Օրմանեանի դէմ անլուր մեքենայութիւններ էին գործադրուում, նա ուսանձնացած իւր փոքրայի բնակարանը, մխիթարութիւն էր որոնում գիտական աշխատանքների մէջ։ Լուռ էր նա բոլոր անպատշաճ և լրագրական զրպարտութիւնների դէմ, հերոսութիւն կարելի է անուանել այն լռութիւնն ու կեանքը, որ նա ունեցաւ 1908 թ. յուլիսի 10-ից սկսած։ «Ոչ դիտեն, վինչ գործեն», երևի, շատ անգամ անցած կլինի խմդութեան և զրպարտութեան այս կենդանի գոհի մտքում։ Այստեղ բարոյական կամքն է միայն, որ նեցուկ կարող է լինել տանելու աշխարհի անարդարութեան մեծ աւերածները։ Ապիկարը, կեղծը, խօսքի հերոսը տեսնում ես, յաճախ, դափնիներ է վաստակում, իսկ գնահատութեան արժանին և անմեղը նահատակում անարդարութեան հարուածների տակ...

Պատրիարքութիւնից հրաժարուելուց յետոյ, նորա աստջին գործն եղաւ. «Նպաստիկ Յանձնաժողով—Հաշուեցուցակ և տեղեկագիր, 1897—1908. 4° Ժ։ տ. 56 եր.» տետրակը հրա-

տարակիլ։ Հրապարակային մի հաշուեւուութիւն էր այդ և կողմնակի կերպով պատասխան այս զրպարութեան, թէ նա ազգային սնդուկից մեծագումար փողեր է իւրացրել։ Որպիսի մանրամասն ծանօթութիւն դէպի գործը։ Այդ գրքոյկը մի յուշարձան է Ս. Օրմանեանի կարողութեան, ձեռներէց գործունէութեան և մանրակրկիտ հետեւողութեան։ Գործի տէրն ու ղեկավարն է եղել և ոչ թուղթ ստորագրողը, մի հանգամանք, որ որոշ մարդկանց համար ցանկալի չէ դարձնում նորա կամքի կատարութիւնը։ Նա դիտէ իւրաքանչիւր նուիրատուութեան պատմութիւնը. գործադրութիւնը, ստեղծուած որբանոցի կամ հաստատութեան վիճակը ծագման օրից մինչև վերջին րոպէն։ Այս գիրքը մի գեղեցիկ վաստաթուղթ է Ս. Օրմանեանի վարչական կարողութեան, գործի մէջ ցոյց տուած եռանդի։

Գիտական մեծ աշխատութիւնները հաստատում են նորա զարմանալի տակնուութիւնը աշխատութեան և հմտութիւնը ստուգաբանական խնդիրների մէջ։ Գրական-գիտական անցեալ աշխատութիւնների մասին յիշել ենք նախընթաց պրակներում, այժմ պատրաստութիւնից հրաժարուելուց յետոյ, երբ ազատ է վարչական գործերից կամ պաշտօններից, իւր ամբողջ ժամանակը նուիրել է գիտութեան։ Երեք տարուայ մէջ, չ'նայելով այս բացառիկ վիճակին, որի մէջ նա էր գտնուում, կարողացել է արդէն բացի վերոյիշեալ տեսակից երեք հատոր հրատարակել։ Այդ գրքերն են. ա) L'eglise arménienne *1910. 8⁰, 192.* բ) *Համապատում. 1911 8⁰, ԺԶ—1104 եր.*, գ) *Հայոց եկեղեցին*, որ առաջին գիրքն է՝ հայերէնի վերածուած։ Վերոյիշեալ փրանսերէն աշխատութիւնը գրուած է օտարների համար Հայոց եկեղեցու պատմութեան, վարդապետութեան, վարչական և ծիսական կազմակերպութեան մասին ամփոփ գաղափար տալու և ջրելու այն թիւր ու սխալ կարծիքները, որ տարածուած են Եւրոպայում։ Ս. Օրմանեանի կողմից մի հայրենասիրական գործ էր այդ. մայրենի, հինաւուրց եկեղեցու ճիշտ պատկերը պնել եւրոպական գիտութեան առաջ, որպէսզի նրանք իրական աղբիւրից օգտուել կարողանան և ոչ մոլեռանդութեամբ լցուած հակառակորդների պղտոր ցնցից, որ ժամանակի ընթացքում արտադրել են կաթոլիկ եկեղեցա-

կանութեան արևելքում գործող Եկեղեցիները կամ Հայոց եկեղեցուց բաժանուածները։ Հայոց եկեղեցին ընդհանուր եկեղեցոյ պատմութեան մէջ մի ուրոյն տեղ է բռնում իւր ազգային ինքնուրոյնութեամբ, մարտիրոսական ընթացքով և հինգ-հարիւրյա աւանդութիւններով։ Ս. Օրմանեանն ամփոփում է այդ ամենը իւր աշխատութեան մէջ՝ նիւթին կատարելապէս իշխող վարպետին յատուկ սեղմ և պարզ ոճով։ Ստարպզի դիտնականները և հայ հրատարակչութիւնները դովեստով խօսեցին այս գրքի մասին, որ հրատարակուեցաւ և հայ լեզուով շատ կողմերից յայտնուած ցանկութեան համեմատ։ Նորա միւս աշխատութիւնը «Համապատումն» է, չորս աւետարանների բաղդատական լուսաբանութիւնը, նկարագրական ոճով։ Հեղինակի նպատակն է առաջնորդել հայ հոգևորականին կամ հաւատացեալին ըմբռնելու այդ գրքի դաղափարները, որպէս զի նոցանից իւրաքանչիւրի համար «աւետարանը ըլլայ իր հոգևոր անունը, բարոյացուցիչ ընթերցումը և հաւատքը զօրացնելու միջոցը»։ Իւր տեսակի մէջ գնահատութեան արժանի մի մեծ աշխատութիւն է այն, թէև նորագոյն ստուգաբանութեան հետևողը շատ քննադատելի կէտեր կգտնէ այնտեղ։ Այժմ զբաղուած է, ինչպէս դիտենք հաւատի աղբիւրից, մի ուրիշ կարևոր գործով՝ Հայոց եկեղեցու ընդարձակ պատմութեամբ։

ԺԳ.

Անաչառ և կուսակցական մոլեռանդութեամբ չկուրացած ընթերցողի համար պարզ է. թէ ով է Օրմանեանը, ինչպիսի ընդունակութեան և պատրաստութեան տէր և ովքեր են նորա հակառակորդները։ Այժմ, երբ Ռուսահայոց լուրջ մասը նորան Հայրապետական աթոռի վերայ բարձած տեսնել կցանկար, հակառակորդները նոր թափով կրկին արշաւանք են սկսել նորա դէմ, չվախենալով ժողովրդի միտքը։ Բայց բաւական է ինչքան տասն ու վրայ եղաւ Մ. Աթոռը և խանդարման վիճակին հասան մեր հասարակութիւնները։ Հայրապետական Աթոռի համար պէտք է ընտրել մի մարդ, որ ոչ միայն կրթուած լինի, այլ և կարող, վարչապէտ, մեր հասարակութիւնների մէջ կարգ ու կանոն ստեղծելու։

Սպագայ կաթողիկոսի առաջ գրուած են շատ ծանրակշիռ հարցեր, որոնք մեր եկեղեցու համար կեանքի ու մահուան նշանակութիւն ունին։

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐՍԳԱՐԱՆ
ՄԱՍԴԱՐԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է 1971 Թ.

II
A 67443